Որքա՛ն մնաք դեռ մոլորած

Եւ իրար դէմ չար քշնամի:
Ուշի՛ եկէ՛ եւ միացէ՛՛,
Եւ միակամ եւ ամեհի՝
Հրդեհի տանի իին կարգն ու սարք
Եւ ողջ աշխարհն մեր կը լինի:



Եւ կը տեսնեմ չորս մէկ ծագէն
Զրկւածներու մեծ բանակնե՛ր,
Հազար լեզով նոյն ռազմերով որոտալով,
Փոքորկին դէմ եւ քշնամուն
Քակելով մէ՛կ վառ դրօշակ
Արշալոյսի եւ բոցերու նման կարմի՛ր,
Կ'արշաւեն վեհ ու յաղթական:

Հին կարգն ու սարքն ու իին աշխարհ
Բոցերու մէջ կ'անհետանան.
Եւ մէկ ծագէն մինչ միւս ծագն արեւի
Մէկ նո՞ր աշխարհ կը շողշողա –
Եղբայրական բանւորներու երկիրը նոր,
Համայնական աշխատանքով՝
Մի դիւքական վա՛րդի նման գեղափր-քած,
Արեւի տակ – ծովի ի ծով – մինչ հիւսիսա՛յգ:

Հին կովկաս

Դարե՛ր, դարեր էս աշխարհը իրաշագեղ,
Իր փերուզէ երկնեռով,
Մշակ մարդու բանուն ու զնդան էր եղած.
Դաշտերն անոր պտղաշտ
Զրւած էին մշակներու քրտինեռով.
Խոկ մեծաւորն անաշխատ՝
Էդ քրտինեֆէն իր զինին էր ամբարած:

Նա ժեռ քարէն կաք-սեր ու մեղը էր համած
Խշողներու խրախնանքին իրեւ տուրք –
Ինք սոված էր մնացած:
Իրար կրծքին չոքած որպէս չար գազան
Իրար էին պատառած
Էդ քախտակից մշակները հարեւան –
Որ իշխողներն աւարներով նոյնան:

Բանւոր էդ խեղն ժողովուրդ
Էն կովկասի քարձր սարին շզբայւած՝
Աւանդութեան կալանաւորն էր անբախտ.
Եւ մեծերը անյագուրդ՝
Անոր քարի, մեծ սիրտն էին բգժտած
Երկա՛ր, անվերջ դարերով . . .

Էդպէս էր իին էդ կովկաս . . . :

ՆՈՐ ԿՈՎԿԱՆ

Բիւր ողջո՞յն ժեզ, նոր կովկաս .
Աղջիկներուդ սեւ աչքերում շողացող
Ժպտին նման դիւրիչ ես դու, ջան կովկա՞ս .
Զրվէժներէդ հասող գլուխ զրերուդ
Նման ազատ եւ հարազատ ես, կովկա՞ս :

Բազմալեզու ժողովուրդներդ հարեւան,
Քանդած կարգերն հնաւանդ՝
Դա՛շն են կապած եղբայրական միուրեան :

Հազար, հազար քաղաքներուդ վերեւ այժմ
Կը ծածանի հպարտ մէ՛կ հատ դրօշակ -
Աշխատանիքի եւ միուրեան մէ՛կ նշան :

Քո սարերէն դիւրական
Կուրն ու Արագ Խշխշալէն, հրալազ
Վրաց ողջոյնն կը տանեն մինչ Երեւա՞ն,
Երեւանէն-Աղբքէյշան ու Արխազ :

Հոգուն մէջ բոց՝ մտքում վառած նոր պատկեր
Ժողովուրդը բո նարտար
Այրած է ողջ անցեալն ու իր կապամֆներ
Եւ կստեղծէ նոր ապագա, նոր աշխարհ :

Բիւր ողջո՞յն ժեզ, նոր կովկաս . . . :

ՆՈՐ ՌՈՒՍԱՍՏԱՆ

Ելբրուզէն դէ՛ն, դէպի հիւսիս,
Եղբայրութեան գաղափարի չափ անպարփակ,
Կը տարածեի Ռուսական դաշտն ընդարձակ -
Բանուրական մեծ ովասիս :

Հանդարտ պառկած մշուշներու տակ արեւոտ,
Անոր մէկ նոր
Հիւսիսայզի միստիկ ցոլքովն է լուսազարդ,
Եւ մէկ ծայրն է արեւածագ եւ առաւոտ :

Էս մեծ երկրի տէրերը հին
Մեր կովկասի տէրերն էին գող ու դաժան,
Որոնց համար լոկ բալանի մի դաշտ էր այն -
Ե՛ւ Ռուսաստան :

Այսօր, սակայն, ըսուս բանոր,
Հին տէրերէ, հին կարգերէ հրաժարած,
Վաստակի շէն երգը շրբին
Եղբայրական ձեռք է մեկնած նոր կովկասին -
Աշխատանիքի մէջ՝ մասընկեր եւ մեծ կուին մէջ՝
զինակից :

Աշխատաւոր եւ գիւղացի տանջուող մարդուն -
Ուր որ լինի,
Յոյսի երկիրն ես պանծալի,
Կարմիր, անյալը Ռուսաստան,
Ողջոյն ժեզի, - հազա՞ր ողջոյն . . . :

ՄԻԱՍՆԻԿԵԱՆ

Էղ ահաւոր բարձունիքն,
Մի երեղին արծու նման դու անհաս,
Վեր Մասիսէն, Ելքրուզէն
Կը դիտէիր ազատ, չքնաղ մեր կովկաս,
Որ վառ ինչպէս մի երազ,
Ծովէ ի ծով կը բողբոշի քաղցրօրէն:

Դո՛ւ կամեցար մէկ նայւածքով անպատռում
Ողջունել էդ մշակներու հայրենիք,
Էղ բազմացեղ բանուներու պետութիւն,
Ինչպէս սիրու կախարդական մի ժպիտ,
Ինչպէս անհառ մի երազ –
Էս աննման, Եղբայրական մեր կովկա՞ս...

Էղ տեսիլքէն դու խանդավառ
Հրդեհ եղար, անհետացար –
Բայց չի մեռար,
Դարձար երազ ու գաղափար:

Եւ հարազատ ք ընկերներ
Էղ գաղափար որպէս արեւ երաշափառ
Պիտի վառեն դարէ ի դար:

Ամեն սերունդ նոր սերնդին պիտի յանձնէ յաջորդաբար
Քան մոգական մի ջա՞հ պայծառ.
Մինչեւ հասնի կարմիր գալիք,
Մինչեւ իին կարգ ու իին աշխարհ
Անցնին որպէս մէգ ու խաւար,
Եւ մնալ գա կարգն ու օրէնի պրոլետար –
Եղբայրական բանուներու մի նոր աշխարհ,
Ուր կը ծագէ արեւն իր լո՞յս,
Ուր կը տեղա անձրեւ ու ձիւն,
Ամենուրեւ –
Համայնալապար մէկ միութիւն:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Երէ՛կ զնդա՞ն էր երկիրդ ու կեանքդ՝ մի դոդ սարսափի.
Վզիդ չոքած էր սովը նման կասղած վիշապի.
Բայց դո՞ւ, աչքերդ եխսիսի կարմիր աստղին սեւեռուն,
Կուի ելար, հեղեղի պէս հոսեցիք քո արիւն:

Այսօ՛ր արդէն կը կանգնիս կոքողի պէս յաղթական.
Վարդե՞ր ունիս ոսքիդ տակ, նակտիդ վրա աստղե՞ր կան.
Սուրդ է ամուր ձեռքիդ մէջ, դրօշդ յոյսիդ պէս պայծառ,
Հոգիդ մի բե՛րդ է անկոլս եւ քո կորովն անսպա՞ռ:

Այնիքա՞ն արագ կը դոփի փառքիդ բոցակն երիվար,
Որքան փարքամ կը ծփան մազերդ հզօր ուսդ ի վար.
Այնիքա՞ն զարք արցո՞ւնեֆ կա սեւսաք աչքէդ առկախւած
Որքան պայծառ մութին մէջ գիշերն աստղերն չէ վառած:

Ողջո՞յն կուի՞դ փառաւոր, ողջոյն քո մեծ յաղթութեան.
Ողջո՞յն բանուր քաջերուդ, մշակներուդ քրոնազան.
Ողջո՞յն եւ կուռ միութեան երկիրներու հարեւան
Արարատէն եխսիսայգ, արեւծագէն-կարպատեան:

Ողջո՞յն արդար նոր կարգիդ, հզօր ջանքիդ շինարար.
Ստեղծագործ մեծ շունչիդ եւ տեսիլքիդ՝ լուսավառ.
Ողջո՞յն անոնց որ ընկան զոռ կուին մէջ յաղթական,
Ողջո՞յն անոնց որ դեռ կան, անոնց որ նոր պիտի գան:

Եւ դո՞ւ մոռցած երէկի անթիւ զոհերդ ու արիւն,
Հսկա վրէծդ կը բողնես ռազմի դաժան աստղեռուն.
Մեղք ու բարիք կը բափես քո ջինջ ու քաղցր հոգիէդ –
Ահա արտե՞րդ են հասուն – ոսկի արտերդ վէտ ի վէտ:

Եւ դու լոյսի եւ սիրու ջահդ ես վառեր ադամանդ՝
Եւ վե՛ր նոյնիսկ Մասիսէն, երկնից դաշտէն արգաւանդ
Հզօր բազկովդ կը կախես. Եւ մուր ու որք ազգերուն
Բարօր մի կեանք կաւետես ու գալն լուսէ մեծ դարսւն.

Բայց թէ մի օր թշնամին պղծել զա քո աշխատանք,
Դա վերջ դնել թռիչքիդ, նարտար բազկիդ էլ՝ կապանք.
Նոյնիսկ մեռած ուազմիկներդ պիտի ելնեն քո հողէն
Եւ այդ անարգ թշնամին մահի փոսի մէջ թաղեն:



ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ

Ասողերն ամեն՝ երկնիքն վա՛ր են թափեր –
Մին՝ տան եղած՝ ձեր նամբին վրա կը վառին.
Գոյներն ամբողջ՝ բռնկեր են էս գիշեր –
Ու պատերէն քանց ծիածան կը փայլին:

Ծաղկոցները գուռն ու լիակն են լիեր.
Ու փողոցին մէջ փունչերով կը փրթին.
Խորհրդային տարեդարձն է էս գիշեր –
Ու դռներէն վարդե՛ր, վարդեր կը թափին:

Ու փառքի պէս հպարտ կանցնիք, ո՛վ քաջեր
Աչքերուդ՝ բոց, ձեռքերուդ մէջ շանքասուր.
Դուք որ մահի սարսափն երբէք չէք գիտցեր
Երջանկութեան ունիք շիկնումն ու սարսուն:

Եւ փոքրիկն է թափը ձեր գնացքին՝
Երբ ձիերը՝ սէգ ու փրփրած կը վրնչեն.
Անոնց բաշերն թարա՛ռն լինեն մոլեգին.
Կանցնի որոտն անոնց դռոյքի ընդմէջէն:

Եւ կը սրսփան փառքէն կողերն քաջածին
Զեզմով հպարտ ձեր երջանիկ մայրերուն.
Ու վարդ կոյսերն, որ մնացին ձեր դարձին,
Այժմ կը ժպտին նման ծիծուն արեւուն:

Ու ծերերը ձե՛զ օրինելով հայրաբար
Այսօր դաժան տարիին իրենց կանիծեն
Որ չի թողեց ձեր շարքին մէջ վեհափառ
Կանգնել իրենց տանջւած հասակն հոյաշէն:

Կայծա՛կն է պայտ ձեր իրավագ ձիերուն,
Ասողերն ամեն՝ երկինքն վա՛ր են թափեր.
Դուք կը քալէք տարափին տակ վարդերուն
Խորհրդային տարեդարձի է՛ս գիշեր . . .

ՄԵՐ ԱՆՄՈՒՐԱԴ ՔԵՐԹՈՂՆԵՐՈՒՆ

Սիրտը առած ձեռքիս մէջ ու շրբիս՝ ողբ մը անգիր
Ուխտի եկա ձեր շիրմին ես հայ գուսանս տարագիր.
Եկա հեռու ափերէ որպէս յետին հայ քերքող՝
Զեր մշտավառ խարոյկէն աղերսելու փունջ մը շող։

Դեռ նո՞ր էիմ ձեր քնարն անհուն շունչով մը օծած,
Դեռ նո՞ր սիրու եւ հացի դիւրական տաղը երգած,
Երբ եկաւ չար կոտորած ։ Եւ ոսկեղէն ձեր քերան
Մնաց մքի մէջ կնէւած՝ կախարդ գանձի մը նման։

Եւ ես անյոյս ու անտուն՝ սրտիս ողբին ունկնդիր՝
Ելա անհուն երկնից տակ ձեր դամբանին ի խնդիր.
Անցա դաշտ ու անապատ, գիւղ եւ անտառ ու աւան
Բայց ո՞չ մէկ տեղն ինձ յայտնեց ձեր հետքն ու կամ ձեր
դամբան։

Եւ սիրտս առած ձեռքիս մէջ ու շրբիս՝ ողբ մը անգիր՝
Ոնքի աւեր աշխարհէն մտա կարմիր Հայ Երկիր.
Մարեր էր սիրտը ցաւէն՝ ինքզինք լափող բոցին պէս,
Այրած էր ողբն իմ շրբին այն երգելու տաժանքէս։




Կանգնած ոսկի ծովին մէջ ալիմ ալիմ հասկերուն՝
Մշակը նո՞ր հորովէլ կը ցնծերգէ հովերուն.
Եւ աղջիկներ – ծաղկոցի վարդերու պէս նորաբաց՝
Վարդէն կարմիր քերքւածներ կարտասանեն Երկիւլած։

Ահա՛ լոյսի կայաններն արեւի պէս բարերար՝
Վառւած հզօր բազուկով բանորներուն մեր նարտար.
Ահա գետերը լուսէ՝ քերքւածի պէս փառաւոր
Անջուր դաշտերը ելած իրենց վազքէն դարաւոր։

Եւ մեր երկիրը որպէս մեծ բաժակէ դիւրական
Հարբած է նո՞ր երազով եւ խտալով տիրական.
Ու մի նո՞ր կամք կը ցոլա մշակ հոգուն իսկ մէշէն
Արեւն ինչպէս լեռնային մաքուր եւ կար մէկ լիէն։

Սիրտը ծաղկե՞ր է հիմա – ծիածանի վառ կամար –
Շիրմին վրա անմուրադ քերքողներուն անհամար.
Եւ մեծ վիշտը հիմերուն – նոր տեսլիքին մէջ լուծած
Կը կերտեն մի նոր համայնք ստեղծագործ-փառապան։

Մի նո՞ր արւեստ, մի նո՞ր շունչ համայնական, հիասքանչ՝
Կը վառի հոս անխափան լուսով նախանչ առ նամանչ.
Եւ դե՛ռ պիսի այն շողա դարէ ի դար բոցավառ՝
Երբ իսկ կարմիր Ապագան հրդեհներ է ողջ աշխարհ։



ՀԵՅՐԱՆ ՈՒ ԶԵՅՐԱՆ

ՀԵՅՐԱՆ ՈՒ ԶԵՅՐԱՆ

Մոկաց տիրոջ լա՛նն էր Հեյրան -
Թիկնեղ ու քաջ ու բարի,
Որ խենքի պէս սիրեց Զեյրան -
Մշակ մի կոյս չիմա՛րի :

Որպէս բարտին դաշտի միջին
Երեւելի՛ էր Հեյրան .
Որպէս շուշան հովտի միջին
Շնորհալի՛ էր Զեյրան :

Սպիտակ ձին տակ խաղալէն
Նա՛ գիւղի շուրջ ման կուգար .
Լուսնակի պէս ծըծըլկտալէն
Զեյրան ջրի դուրս կուգար :

- Քո շնորհին Մոկաց Աշխարհ
Զէ՛ արժանի , իմ Զեյրա՛ն .
- Քո մեծ սիրուն միայն յարմար
Վանա խօրօնն է՛ , Հեյրան :

— Մընած է ողջ աշխարհ , Զեյրա՛ն ,
Դո՛ւ ինձ համար վառ օր ես ,
— Դալար բոյիդ մեռնիմ , Հեյրան ,
Հազարի մէջ հզօ՛ր ես :



— Որդի՛ , ին ո՞վ է քո սիրած .
Վայե՞լ է նա Մոկաց տան .
Ո՞ր մեծ զարմէն է նա սերած -
Ո՞ր արժայի գերդաստան ...

— Հայրի'կ, զտա ես Մոլաց տաճ
Միակ վայել սիրուիին.
Ո'չ Մըսր, ո'չ Վիրք եւ ո'չ Ռատան
Ինոր հաւաքը կին ունին...

Բոյը բարակ ու դալար է
Նոր Խսպահան ուռի պէս,
Երեսն՝ արեւ, ունի՛ կամար է,
Բերանն ընտիր նուռի պէս:

Արեւի տակ դեռ չէ՛ բուսեր
Ծաղիկ ժանց եարս գովական.
Ո'չ մէկ աշուղ կրնա հիւսել
Դովին է՛ն մշակ աղջկան:

Յոնիքեր կիտեց Մոլաց իշխան.
— Զարք խարեր են ժեզ, Հէյրան.
Ռամիկ մի ժած հա՞րս Մոլաց տաճ -
Այդ չէ՛ հնար յաւիտեա՛ն:

▲

Քունը փախաւ ինոր աչքէն
Հաց չի դպաւ բերանը.
Սիրուն գոյնը թափաւ դէմքէն —
Ել չէ՛ր նա նոյն Հէյրանը:

— Մոմի նման գունատ ես դու —
Իմ աչքի լո՞յս, իմ Հէյրան.
— Ասուած ժանդէր կարգը մարդու
Իմ միակ սէր, իմ Հէյրա՞ն:

— Կերպամ ժաղագ — կասեմ ժն հօր
Սիրուն օրէնք չիմանա՞ր.
Դեռ մեր սիրու նման հզօր
Սէր չէ՛ տեսած էս աշխարհ:

Զէ՞ որ հայրդ է — ու սիրտ ունի.
Նա՛ էլ մեզ պէս սիրած է.
Մարդ է, կելնի մեր սէրն կ'օրհնի —
Մեր գիրն էսպէս զրա՞ծ է:

Զարկաւ գնաց Մոլաց ժաղագ —
Իշխան զօգան էր մեկնած,
Դարձաւ, հասաւ զօգանն արագ,
Օրն իրիկուն դեռ չեղած:

Սակայն անոր աղաչանքին
Իշխանն մնաց անտարբեր.
— Ամենին են խննք ձեր տարիքին
Դուք չէֆ գիտեր ի՛նչ է սէր:

Մոլաց հզօր տաճ ժառանգին,
Էս խննք սէրը չէ վայել.
Քաջն իր փառքին, սէրն իր կարգին —
Ասուած էսպէս է կամեր:

Հօր դէմ տւաւ կտրին Հէյրան,
— Քեզի մնան Մոլս ու փառք.
Իմ տունն-աստոր, փառքն է Հէյրան.
Ասաւ հեծաւ ձինն արագ:

Հասաւ Հէյրան իր թարքն առաւ.
Կայծակի պէս ժշեց ձին.
Ամպի նման փոշին ելաւ,
Քող հիւսենով սիրային:

Իշխան կանչեց շա՞տ ձիաւոր
Ու տւաւ խիստ իրաման,
Ետ չի դառնան ժանի դեռ որ
Ետ չեն բերած եւ Հէյրան:

▲

Զէյրան փոշու ամպի տակին
Տեսաւ մի խումք ձիաւոր.
Զրահը՝ վառ, սուրբ՝ ճեղին,
Դաժան ասպիս ու զինոր:

— Տես, տես Հէյրան էն ջուլստ եղնիկ -
Քառասուն չար շուն ետեւէն.

— Դու մի՛ տվրիր, մարալ աղջի՛կ,
Վերեւ անհաս սարե՛րն էն:

— Նետ ու աղեղ ամուր բռնած՝
Է՛ն տեղ կանգնած է որսկա՛ն.

— Դու անհոգ կաց — մե՛ծ է Աստուած,
Նետ չի գտնի իր նշան:

— Հէյրան, տե՛ս էն կարմիր պարան
Փախի նամքի երկայնքին.

— Կարմիր կակա՛չ է այն, Զէյրան —
Մաղկած էն զով բարձունքին:

— Ժայռի ծէրին կայնաւ անհա՞ս
Ազատ ու սէ՛գ է՛ն եղնիկ.

— Թողի՛ր արագ, ջան երկվարս
Տա՛ր իմ Զէյրան, իմ եղնիկ:

▲

Սարի ծէրէն շուտերն ընկան
Հեծեալներուն վիրխարի՛.
Հէյրան բռնեց ծաղկած նամքան
Մաղարքախիտ անտառի:

— Քանց ուռի նիւդ է՞ր կը դողաս,
Իմ ջան աստոր, իմ Զէյրան.

— Քանց վառ արեւ կը շողշողաս,
Վախեմ մարեն քեզ, Հէյրան:

— Գետով էն դիմ — քաջ ու բարի
Կաշտի ծոերն են հզօր.
Էն տեղ — լանջը էն պէտ սարի
Տաթինք մեր սէրն բախտաւոր:

Զի չէր ասես — հո՛ր ու երազ
Հետ երկնուց մէ՛կ կը ք-ոնեէր.
Եւ գունդն անդուլ — արագակազ
Անշեղ անոնց հետքին էր:

Հասան Զոել ուր Մոկաց գետ
Կը գուգի հետ Տիգրիսին.
Հէյրան անցաւ գետն որպէս նետ
Թանկ եարին հետ միասին:

Բայց գնդին հետ գետն արաց խազ
Որն — կուլ տւեց ձիուն հետ.
Որն — քարէ քար — արնաշաղալս
Քշեց տարաւ նա անհետ:

Միայն մնաց պետը գնդին
Վարար գետի է՛ն մէկ ափ,
Մահիւ դեղինն իր չար դէմքին,
Ու հոգուն մէջ մեծ սարսափ:

▲

Երբ Կաշտ հասան — մութն էր իշած,
Եկան — տարան հիւրատուն,
Հոն հանգ առին ու կերան հաց,
Արին իրենց պատմութիւն:

Ու քաջ ծոերն Կաշտի չքնազ
Խորհուրդ արին միասին.
— Մեր հոդն ու զուր, մեր հացն ու աղ
Զեզի հալա՛լ է — ասին:

Էն տեղ սիրով Հէյրան - Զէյրան
Շէն ու պայծառ տուն եղան.
Տեսան քոռներն իրենց քոռան,
Եւ նոյն սիրովն էլ մեռան:



Դարեր անցան ու Մոկաց տուն
Անցաւ փշող քամու պէս,
Անցան պետերն, իրենց անուն
Քամու տարած փոշու պէս:

Բայց կը պատմեն քերնէ քերան,
Թէ ի՞նչ խօրու էր Զէյրան,
Թէ ի՞նչ սիրով սիրեց Հէյրան —
Դեղուկ էդ վարդ աղջկան:

ԿԱՐԱՒԱՆԻ ԵՏԵԼԻՆ

ԿԱՐԱԿԱՆԻ ԵՏԵԼԵՆ

I

Սիրուն Թամար Ռշտունի դեռ եօթն ամսի հարսնուկ էր,
Երբոք ուզումի փողն հնչեց . Եւ իր Պատրիկն անվեհեր՝
Մի պագոլ ջերմ ու վերջին՝ հեծաւ բացակն երիվար,
Գնաց . Եւ իր արեւէն այրի քողեց հեգ Թամար :

Երբի օրէն է՛լ աշխարհն իր բանտն եղաւ դառնագին .
Մինչեւ ծնունդ տւաւ նա անուշ եւ բանգ Վազրիկին .
Որի վրա հակեցաւ ինչպէս գիշերն հեշտալի ,
Որ նոր լուսնին հսկելու տենդէն տակաւ կը հալի :

Եւ որք սրտին մէջ , ուր նա քանդած էր յոյս , ամէն բան
Ամուր կանգնեց Վազրիկի համար աննիւր իր սեղան .
Ինչպէս ուսին , որ կ'անի , կ'ըլլա մի սար վիրլարի —
Անգուսպ , քանդող ու վսեմ — այնպէս սէրն էր Թամարի :

Շուքի նման ամփոփւած վրա անոր սնարին
Օրօր կ'երգէր , կը պատմէր քելերն ի վար քնարին
Վէպերն ահեղ մարտերուն եւ սէգ զարմիկ քաշերուն ,
Որ զոհ ըրին իրենց կեանքն իրեղէն կոյսի մը սիրուն :

Հէքեաք կըսէր փաղաքուշ՝ գանձի , սէրի եւ փառքի
Եւ այն սրտոտ լաներուն , որոնց արկածն է յարգի ,
Ու երգն անծայր քարվանին մի ակի շուրջ բոլորած ,
Տաղերն՝ անմահ գուսանին մեղրոտ շուրբէն իր քուծ :

Ուր որ կոխէր ոտքն որդուն — իր սիրտն ա'յնտեղ կը
տրուիկը .
Ուրկէ անոր ձայնը գար — իր յոյսն ա'յնտեղ կ'ամփոփէր .
Եւ իր կեանքի մութին մէջ նա ոսկի ա'սողն էր յոյսի .
Թամարն էլ՝ ամպն , որ անոր շուրջ կը դառնար մեկուսի :

Եւ պերն որպէս դիւքական սօսին դալար ու շխտակ,
Որ ջինջ ջրի մը ակին հպա՛րտ կ'անի երկնից տակ,
Այնպէս վազրիկ ուռնացաւ իր մօր լացին տակ բարի.
Կանաչ ծիլ էր — ու սօսի եղաւ տարի առ տարի :

II

Հազիւ տասնուր տարւա էր երբ նա առաւ զոյգ մ'նզներ,
Շէ՛կ էր մէկը բոցի պէս եւ միւսն էր բուլս քանց գիշեր:
Հօրմէն ժառանգ կը մնար մի քանի արտ ու այգին.
— Օրհնեա՛լ է հացն, որ շաղւած է բանկ ցողովն քրտին-
ֆին:

Ի՞նքն էր մշակն ու ջրւոր, ինքն՝ իր հօտաղն ու մաճկալ.
Ի՞նք կը ցանէր, կը հնձէր եւ ինք մինակ կը ննէր կալ.
Մայրն էլ իր սէրն կը խառնէր զաւկի մաքուր վաստակին.
Կուլա՛ր երբ միտք կ'իյնային փառքի օրերն իր նախկին:

— «Որդի՛, կուրնար այս աչքըս, որ քեզ մշա՛կ չը տեսնէր.
Ասպէտ էր հայրդ. քո տեղն էլ շեն փառքի կրկէսն էր.»
— «Փառքիս կրկէսն է միայն արտն իմ ոսկի ցորեանին.
Եւ իմ կարմիր յաղթանակն ծիծուն եւ վարդ մեր գինին :»

Արտին մէջ նո՛յն կը ծաղկէր հասակն անոր սիրական.
Կ'օծէր արեւն իր մազերն, նակատն էլ՝ քաղցր լուսնիկան.
Մէկ կը դատէր-կառնէր տաս. ու երբ աշուն կը հասնէր
Հնձանն, առատ գինիով, ամբարն հացով լեցուն էր:

Ու երբ կուգար իրիկուն, կախարդ լոյսովն աստղերուն
Վազրիկն էլ տուն կը դառնար հետ զոյգ հուժկու եզնե-
Եղջիւրն անոնց զարդարած նախշուն բուրեան պսակով,
Սիրտն իր փրած ծաղկի պէս, հոգին գինով վաստակով :

Երեք տարի չ'ր անցած, երբ տունն էր շէն ու պայծառ,
Սեղանն էր բաց նամբորդին — փոյք չէ քէ ո՛ր երկրէն
գար:

Յոզմած գուսանն այդ սեմին վստահ կուգար առնել կանգ
Հո՛ն իր վիշտը մոռնալու — նամբի խոնչէքն ու զրկանիք:

III

Մի օր հեռո՛ւ աշխարհէ եկաւ գուշակ մը հզօր.
Թափեր էլն ուսն ի վար զանգուր մազերն ալեւոր.
Զեռքն էր բոներ մազաղար մը հին — ամբողջ նկարուն.
Վարդե՛ր կային հո՛ն — հաւքեր, կախարդ տողեր ու գա-
րուն...

— «Վարպե՛տ, բախտը գուշակէ շեն ու բանկ Վազրիկիս.
Եւ մինչ հոգուդ երազէն կախարդ գրքիդ կը հակիս,
Գրո՞ւ լինի քող քո սիրտ — զաւկիս բարին կամեցիր.
Մե՛ղք եմ. իմ տուն ու յոյսեր հովին մի՛ տար ցան ու
ցիր...»

— «Տիկին, զարմիկ մի ցեղի ընձիւլն է նա բարմագեղ.
Պապերն անոր բափեր են արիւն առատ քանց հեղեղ.
Բայց ո՛չ անուն կը մնա, ոչ աւա՛րն է մնայուն.
Կ'անցնի մէկը շուքի պէս, մէկն էլ հովի մը հանգոյն :»

«Ես ի՛նչ պայծառ կը տեսնեմ զաւկիդ աստղը լուսածիր.
Ահա՛ շուշան մը դալար... ձիերդ գանձով շո՞ւտ բառձիր.
Կախարդ հա՛րսն է Վազրիկիդ... եօթն օր ըսեմ կամ ամիս.
Որդիդ նամբորդ է բարով... տիկին, կինչո՞ւ կը տրտմիս :»

«Կեցի՛ր... ահա՛ ձոյլ ոսկի, մետախս, սնդուս ու գոհար...
Վազրիկիդ է մեծ քեզիրգան... սե՞ս իր դարձի նանապար.
Կի՞ն, բա՛ց դուռը — զաւա՛կի է կուգա հեծած երիվար...
Գուշակն լոեց դողահար — ներսը լաց ու արիւն կար...»

Թամար սեւն այդ չի տեսաւ. կարծեց դուռը կը բանար
Հարուստ Վազրիկ գրկելու. ֆարվանն հեռւէն կ'երեւար...
Ափը դրաւ իր նւէր, ձեռքին վրա՝ իր համբոյր.
Ու սիրտն ամպի պէս քերեւ գարձաւ իր տուն սիրաբոյր:

Երեք ջորի բեղցուցին հազար տեսակ բարիքով —
Մէկը հալաւ ու լաչակ, մէկն էլ բոյրով ու միրգով,
Երրորդն՝ ուլունք ու գոհար, զարդ ու ծարիր առանձին,
Եւ եօրն առոյգ քաջի հետ հարսի հօր տուն նամբեցին:

Լուսնակն ինչպէս կը ծարի մէջտեղ գոհար աստղերուն,
Բացւած շուշանն է ինչպէս ի մէջ քափուր վարդերուն,
Այնպէ՛ս Նւարդ Ոստանի մէջ էր ծաղկեր սագերով,
Կարմիր սափորն իր ուսին՝ ակն էր իշեր նազերով:

Եղնի՛կն էր նա առտուա ամբիծ ցօղով դիեցւած,
Գազպին կերած հացի տեղ, վարդերու մէջ քնացած.
Մազերն իր սեւ ու յորդան ինչպէս ամրան կէս գիշեր.—
Իր աչքին մէջ նայողը էլ վիշտ ու մահ չէր յիշեր:

Իր հոգիկն շա՛տ խորունկ՝ Վազրիկ նորհարսն իր սիրեց.
Պատկերն անոր իր լանջին տակ նա անջինջ փորագրեց.
Նւարդ ըսես թիրենն էր, Վազրիկն էլ լոյսն իր անհառ.
Որի ցոլքէն էր դիւրւեր ու չէր գիտեր իսկ պատճառ:

Վազրիկ զգաց որ Նւարդ մի աղջիկ չէր հասարակ,
Պատկերն ուներ դիցուհու, հասակն էլ պերն ու բարակ՝
Վայել էր լոկ բամբիշի. մեղք էր զրկել այն փառքէն,
Հնումն նա եօր ծովերու տիրուհին էր ապաքէն...

Բայց իր հերկած արտին մէջ բուռ-բուռ ոսկի չէր բուսներ.
Փարքամ դառնալ քրտիմքով-միայն խենքի մը յո՛յսն էր.
Այսպէ՛ս պիտի բոլորէր օ՛ր ու ամիս ու տարի,
Ու դեռ պիտի նա բափէր քրտիմքն նակտին ի՛ր բա՛րի...

Գարունն էր ծաղկեր — Կանաչ Կիրակի —
Մրցում կար ձիու, խելքի ու բազկի.
Դաշտն էին իշեր նորտ ու նախարար,
Սեպուհ ու ուազմիկ, զօրի ու զօրակար:

— Թամարն ըսած էր. «Աչքիս լոյս, Որդի՛,
Առ ձիդ. ու հազի՛ր լարերդ որսորդի.
Ու գնա՛ շահիլ փառքն, որ հօրըդ էր —
Եղիր հօրդ նման ասպետ-տանուտէր ...»

Նւարդն ըսած էր. «Վազրիկ, իմ արե՛ւ,
Մեծցի՛ր բանց սօսի մեր գլխին վերեւ.
Եղիր ուսմիկէն ու քոյլէն սիրւած —
Ասի՛ր փառքն, որ է ուրիշէն խլած ...»

— «Զեմ ուզեր կարծեն ինձ անհար գերի.
Բաւ չէ տունըդ՝ շէն, արտդ լինի բերի.
Պէտք է սնափառ էս մեղկ զոչերուն
Ցոյց տալ քէ մա՛րդ ենք — զո՛ւր չէ մե՛ր արիւն ...»

Գնաց մրցումին իր սեւ ձին հեծած,
Զի՛ն, որ ինք կրքած, ինքն էր մեծցուցած.
Ու հետ արեւի վերջին շողերուն՝
Վազրիկ՝ յաղթական փառքով դարձաւ տուն:

— Որդի՛, յաղթական քու դարձի նամբին
Թող փառքի կամարդ լինիմ ու դափնին.
— Ես էլ հրավագ ձիուդ սմբակին
Փոշի՛ն քող լինիմ, Վազրիկ, իմ անգին ...

— «Ո՛վ չէ մեծատուն — վատ ու ըստրո՛ւկ է,
Ո՛վ որ գանձ չունի — ծախւած գերո՛ւկ է.
Մա՛յր, ինձ ծաղրեցին պետ ու զօրական ...
Ըսին. հողդ փորէ՛, կոպիտ շինակա՞ն ...»

Թամար ըսաւ. «Հեզ որդի՛, մի աստւած կա նիւքեղէ՛ն,
Որին լո՛ւռ ծունք կը դնեն տէր ու ծառա հողեղէն.
Առանց որի մեր օրը — մոայլ կեանին է ըստրուկի.
Ազատ անունն ի՞նչ կ'արժէ քէ գանձ չունիս կամ ոսկի՛...»

«Գուշակն ըսած է որ դու պիտի լինիս բեղիրգան.
Եւ ի'նչ գանձ որ ծովն ունի, ի'նչ որ իրան ու Զին կան,
Բեհեղ, վարդիւղ ու մարգրիտ քարած հազար ուղտերու
Պիտի դառնաս ք Նւարդ՝ հզօր բամբիշ կարգելու:»

«Մոոցի՛ր գուրանդ գոմին դուռ, ծախի՛ր գոմէշդ ու եղ-
ներ.
Հայրդ կը շիկնէր ամօրէն քէ որ մշակ ֆեղ տեսնէր.
Մոոցիր անպէտ էդ վաստակդ, որ լոկ վայել է ուամկին—
Գուշակն ուղի՛դ է գծեր — անկէ ֆալէ, իմ անգին...»



Նւարդ իր դուռ ծաղկելուն եօթ լուսնակ էր բոլորեր,
Երբոր հոգին վիրատոր, բայց մեղմ ճայնով անտարբեր,
— «Մայրի՛կ, ըսաւ, երբ արեւ ծագի նորէն եօթն անգամ
Բեներս պատրաստ քող լինին — օտար երկիր եւ կ'եր-
քամ...»



Նւարդ սեւ լուրն որ լսեց՝ աչքեր լացի ծով դարձան.
Որմէ վարդերն իր այտին փունջ-փունջ ինձկան ու չորցան.
— «Մ'ըներ, մատա՛ղ արեւիդ, ինձ ողջ կրակ մի՛ ձգեր.
Տեսքէդ՝ աչքերս, համբոյրէդ՝ սովոր շուրպերս մի՛ զրկեր»:

«Փառքն ու ոսկին ի'նչ ընեմ, դո՞ւ ես իմ փառքն ու գոհար.
Անմիտն է լոկ մետախսի, ֆիրման շալի՛ սիրահար.
Մ'երբար. քող մեզ իրեւ տուն ծառի բո՞ւն՝ իսկ շա՛տ
լինի.
Քու տեսքն է ինձ խրախնանի, անուշ սէրդ էլ հին գինի:

«Կեցի՛ր, վազրիկս, քովս կեցի՛ր, մշա՛կ լինինի քող յա-
ւէս,
Դու Ժիր մշակն արեւառ, ես էլ հօտաղ ֆեղի հետ.
Դու հօ՛տն արծէ, ես՝ գառներ, սրինգդ ածէ՛, պարեմ ես.
Ուրկէ՛ ֆալես հետեւիմ ֆեղի հլու շուրփիդ պէս...»

«Մ'երբա՛ր, Վա՛զրիկս, հարսնագոզս ինձի պատամի մի՛
շիներ.
Մեղրոտ շունչիդ կարօտով ինձ սեւ հողը մի՛ դներ.
Կեցի՛ր, ծառա՛յ եմ կամֆիդ, սուզըս վախէ ժըպիտի՛.
Լացէս նոյնիսկ ֆեղ անբաւ գանձեր քափեմ ես պիտի...»

— «Նւա՛րդ, կեանիքս հեռանալ դիւրին է ինձ աւելի՛,
Քան քէ ֆեզմէ, որ կեանիքս քա՛նկ ես ու շա՛տ սիրելի.
Քայց մի պարտք կա ինձ տոհմէս, որ կը վարէ ինձ ան-
կամ.
Փարբամ պէտք է որ ապրիմ եւ կամ հաշւեմ քէ չը կամ.»

Զիւնու ու սէգ Արտօսին բարի լոյսն նո՞ր էր ծաքեր .
Հարսերն ըլքի կ'երպային՝ այսերն երկու բաց վարդեր .
Ծովու ամէն երդիքէ կ'ելնէր պալան առ պալան –
Կախարդ՝ կոյսի երազին կամ քաղցր վշտին իսկ նման . . .

Դրկից, ճանչւոր ու համհարգ եկան տունը թամարի .
Աղջիկ մը նո՞ւ էր բերեր, մէկն էլ գազպին ու բարի .
Հարսերն՝ մետափ քաշկինակ, կիներն՝ գաք-առ ու փոխինդ
— Հօրբոյրն՝ յուռուր մ'հերանու — սիրու մը ոսկի ու
յակինք . . .

Բակին մէջ ձին էր կեցեր՝ վարդեր՝ կամար վիզն ի վար .
Նւարդ ուլո՞ւնքն էր կախեր, բոժոժն ու ծովն էլ՝ թամար
Ու երբ վազրիկ բազմեցաւ քամբին վրայ պարսկական, —
Կարծես քէ Շահն էր հզօր որ ետ կուգար յաղթական :

Նւարդ առաւ կուժ մը ջուր, ճամբին վրա շո՞ւռ տուաւ .
Որպէս զի ձին վազրիկի դէպ փա՞ռք վարդեր սրարշաւ .
Ճամբան ծաղկէր փունչ առ փունչ առջեւ անոր նժոյգին,
Ծովը ցամֆէր, եւ անդունդն անոր բանար իր ոսկին :

Որ շոգն՝ անուշ սիւժ դառնար, ամայքն հոսէր կարճաղ-
քիւր,
Ո՞ւր ճա ճատէր հանգչելու մի ծառ ծլէր հեշտարոյր .
Որ ծովն ու Զին ու իրան անոր առաւ գանձ տային
Եւ ճա բարով իրեն գար երբ որ անցնէր եօր տարին :

Ապա երբի ճամբին վրա կոտրեց սափորն էդ կարմիր –
Դատարկ — իր որբ սրտին պէս, ու վառ յոյսին պէս՝
Տարաւ գոգնոցն աչքերուն, մի դող իրանն իր ցնցեց .
Սոխակն ինչպէս վարդ կուլա էնպէ՞ս ճա տա՞ղն էս հեծեց .

— «Ենտեղ որ դո՞ւ կը կոլսես, ես է՞ն ճամբան պիտէի .
Օղակ-օղակ ֆեզ զրկած՝ պատկերդ՝ անվերջ դիտէի .
Ու երբ ծարաւ դու կայնես վնիստ ակի մը վրան,
Ես էն շրիկ պիտիկ ու ցողէի քո բերան :

«Հո՞ն, ուր որ դո՞ւ հանգ կ'առնես, ես շէն պանդոկ պի-
տէի,
Քեզ հաւ ու գառ խորոված, շարբար ու մեղք քափէի .
Հո՞ն գար քունըդ դիւրեկան քանց խունկ ու վարդ հոսե-
ւան .
Ոսկի արռո ֆեզ տայի, մարմար բաղնիք էլ վրան . . .

«Բազարն որ դո՞ւ կը մտնես, ես լինէի բեզիրգան .
Գանձերն եօրը ծովերու, ի՞նչ որ թուրան ու Զին կան —
Բոլո՞րն յօժար կուտայի քո մէկ հատիկ համբոյրին .
Աստւած վկա, ո'չ մէկ մարդ անկէ կրնար տալ մեծ գին :

«Վարդի իւլով ծանրաբեռն՝ ես զով հովը պիտէի .
Քրտնած դէմքիդ արեւառ՝ կազդոյր ու բոյր դնէի .
Մազերդ ի վար վարդի բերք, հպարտ ճակտիդ՝ էլ
համբոյր .
Ըսէի-շա՞տ եմ տանջեր . գլխիս տէ՞ր, շո՞ւռ տուն եկուր . . .»



Քարվանն ընկաւ ճանապարհ՝ զըրընգ, զըրընգ երգերով .
Լելակ ու վարդ քափեցին կոյսերն սատափ մաղերով .
Թամար անուշ ու գըռու՝ տուա մի մօր օրինութիւն .
Ապա մարած վա՞ր ընկաւ որպէս զարնաւծ մի բոչուն :

Թամար իրենց այգիէն քերաւ մի քարմ քարունակ
Ու տան քակին մէջ տնկեց իբրեւ յոյսի նշանակ .
Նւարդն է՛լ ոստ մը յարգի վանա ժափուր վարդերուն —
Իբրեւ կարօւ քոյալսու, սէրի վէրքին պէս կարմրուն :

Գաղտնի արցունի մը քափեց անոնց վրա հէք Թամար,
Նւարդն էլ պազ մը հրուտ, ցաւի ժպիտ մ'աննշմար .
Մինչեւ անոնի ուսնացան, քացին քածակ հոտեւան
Շուրջը գուռին երգեցիկ, հորին առջեւ ու դրան :

Գաւթին մօտիկ, ուր Վազրիկ օրւա խոնչէքն իր կ'առնէր,
Հո՛ն, ուր արռոն էր մարմար՝ վարդաստանին առընթեր,
Մէկը նուռի մը տնկեց, մէկն էլ լացող ուռենի .
Մէկն հո՛ն գրկանի երազեց, մէկն էլ պաշտում մայրենի :

Բուրդը մահճին Վազրիկի քա՛նի գգրար գգեցին,
Կալսարդ քա՛նի հաւքերու փետրով քարձերն լեցուցին .
Վերմակն ամբողջ ծաղկեցաւ գոյնգոյն մետախս վարդե-
րով,
Բարձի աստան ու ծածկոցն՝ անմեռուկի քերքերով :

Երբորն գիշերն քողի պէս կ'իշնէր վրա Ոստանի
Նայւածքն անոնց կը գամէր էն վառ աստղին ընտանի,
Որի համար ըսած էր Վազրիկ . «Սա՛ աստղն է քայստիս .
Որքան փայլի նա՛ արեւս դեռ վա՛ն է, մեզ աւետիս...»

Հո՛ն էր էն աստղն, երբ գիշերն անամպ լինէր ու քարի .
Բայց երբ գոռար փոք-որիկն, փրբ-էր քար-առն վիթխարի,
Երբ բուքն՝ արաւկ դեւի պէս՝ գար արշաւել սարէար,
Անոնց հոգուն մէջ սարսափն անդունդի պէս կ'ամրանար :

Ամէն շարաք երկու օր պահի բոնեցին, երկու՝ ծոմ .
Ժամ չի մնաց, ո՛ւր անոնի չը վառեցին խունկ ու մոմ .
Մատուռ ու սուրբ չի մնաց, ո՛ւր չը գացին ուլստաւոր,
Զեղաւ մէկ վանի, ո՛ւր մատաղ չը բաշլեցին կամաւոր :

Ամէն քարվան, որ կ'անցնէր, անկ մի լուր կ'ուզէին,
Գուշակ քէ գար՝ Վազրիկի քայստը կարդալ կուտային .
Իսկ քէ անցորդ մը քակէր դռնակն անոնց մոռացւած,
«Վազրիկն եկաւ» գոչելով կը մարէին գրկարաց :

Այսպէս պատկերն Վազրիկի էդ տան միջին կը մեծնար .
Ինչպէս ուսին անկապուտ մէջ իր վազգին լեռն ի վար .
Եւ զոյգ հատնող մոմի պէս սիրուն նւարդն ու Թամար
կը հսկէին էն նամբան, ուրկէ Վազրիկ պիտի գա՛ր . . .



Քարվանն օրօ'ր ու շօրօ'ր՝ մուրը չ'իջած հասաւ վան։
Վազրիկ հո՛ն նուր հաւաքեց, ոսկի տուփեր դիւթական։
Դինու բասեր նկարէն, զունար, նանոց ու տորան։
Եւ էլ մէկ տեղ հանգ չ'առաւ մինչեւ իրան ու թուրան։

Եօր գին տուին ի Թէկրան, ինչ որ առած էր վանէն,
Տաս զին տուին ի Թուրան, ինչ որ տարաւ իրանէն։
Մեծաւ քարվանն օրէ օր, ինչպէս գետը կը մեծնա։
Անցաւ Թաշկենդ, Սմրդանդ, իշաւ մինչեւ Բուխարա։

Քարվանն անկէ մտաւ Զին— անծայր երկիրն Արեւին —
Ուր տեղ հազար քաղաքներ գետերն ի վար կը ճգլին։
Կայսեր ծաղիկ ցանեցին երբ նա անցաւ ժպտագին —
Կարծես ուազմիկն էր յաղբող նամքին վրա իր փառքին։

Ապա անցաւ կղզիներն՝ անքիւ գանձի ու բոյրի —
Ուր կեանքն հէֆեար մ'է անուշ եւ տունն՝ առանց կոտորի.
Ամէ՛ն մա՛րդ, ուր կո՛ւր ունի եւ ամէն կուր՝ մարգարիտ։
Ուր մեղք ունի ամէն տունկ, ամէն ծաղիկն էլ ժպի՛ւ։
Նաւը բարձած մարգարիտ, փղոսկր, մետախ, բուստ ու

Չափեց ջուրերն լուսնկա — ներմակ ու ջինջ որպէս կար,
Անցաւ Սիամ ու Սէյլան, ուրկէ իշաւ Հինդուստան —
Աշխա՛րհն վէպ ու մոգուրեան եւ համեմի վարդաստան։

Այնուղ քարվան մը կազմեց ներմակ ու յաղբ փիղերու։
Եւ ձորն ի վեր Գանգէսի ու զով շուլքն ծառերու
Մտաւ Դելիի սրբազն, եւ դէմ լսանի պալատին
Իշաւ դարսասն հոյակերու՝ էս հայ հզօր Ալատին։

Դեհի կեցաւ եօրն ամիս, ու եօրն անգամ նոխացած՝
Համեմ, հօմա եւ լսիոն ու քաշմիր շալ թեոցուցած —
Քարվանն հանց նա նամբա դէպ Խապահան ու Շիրազ —
Տունը քափուր վարդերու, քերպողներու հրամագ։

Անկէ իրեն հետ առաւ հինա, վարդիւլ, գորգ ու զարդ,
Լուսնի լոյսով քարվանը մտաւ Բաղդադ լուսազարդ —
«Հազար ու Մէկ Գիշեր»ի կախարդ ու մեղկ էդ ոստան,
Ուր տեղ չո՛րս բան կար յարգի — ձի, վէպ ու կին ու
Գուրան։

Էնտեղ ի՛նչ որ նա ծախեց, հազա՛ր տւին վոխարէն։
Ո՛վ որ մի բան գնած էր, գնել փուրաց այն նորէն։
Ապրանք բերաւ ծախելու նա՛, որ գնել չէր կրցած։
Այսպէս փարքամ բեզիրգան Բաղդա՛դն անգամ չէր տեսած։

Քարվանն հազար ուղտերու հասաւ Մուսուլ, իջաւ Շամ —
Փարքամ քաղաքն, որ տօնի ծիծաղն ունի յարաժամ,
Էն որ վէպի պէս դիւրիչ բազար ունի շարէ շար՝
Մէջին խունկ եւ արար բուր, գերի, ծարիր ու շպա՛ր...

Եւ հուսկ լեցուց նա նաւերն՝ ամբողջ կախարդ Արեւելիք —
Գոհար, վարդիւլ ու շպար, մետախ ու շպար-ամէն բերք,
Խունկն ու հաշիշն Արաբին, նոան զինի տիկ առ տիկ։
Բացաւ ներմակ առագաստ — մինչեւ դշլոն Վենետիկ։

Հո՛ն, ուր շենք կը կանգնի մարմար ժամն Սուրբ Մարկուսի,
Ծովի ու եօր ցամաքի գանձար այնուղ կը հոսի։
Հո՛ն կը փուրաց դոժն ու կոմս, արքա եւ լորդ խաչակիր,
Ծպտեալ խաներն իրանէն, ամիր, սուլթան ու ֆա՛ֆիր։

Վազրիկ բեռներն իր ծախեց, հո՛ն շահելով մէկին տա՛ս։
Բեռցուց նաւերն՝ անքիւ գէնիք, արձան, պատվիր ու
կերպաս,
Հասաւ փարքամ Բիւզանդիոն, ուրկէ սա՛ գիրն նամբեց
տուն։
«Մայրիկ, փառքով կը դառնամ — ապրի՛ գուշակն իմաս-
տուն...»

Բակի նոնենին եօրն անգամ բացաւ
Շիկնոտ ծաղիկներ՝ ժպտող յոյսի պէս.
Ու Նւարդ գաղտնի՝ իր սէրը լացաւ
Իր դալար սէրը — նուան ծաղկի պէս:

Եօրն անգամ ծփաց հունաքը ծով ի ծով
Դեղին հասկերով՝ սրսուռ ոսկու պէս.
Եւ անբախտ թամար ի զո՞ւր կսկիծով
Հսպասեց որդուն — ոսկի հունաքի պէս:

Եօրն անգամ նուքերն կալսւեցան քուփէն՝
Ժպտող կրյսերու աչքերուն նման.
Բայց զինու քասերն դո՞ւրս չ'ելան տուփէն՝
Կարմիր օծելու իր դարձի նամբան:

Եօրն աշո՞ւն մեռան մարմար ձիւնի տակ,
Եօրը ձի՞ւն ծածկեց նամբան իր դարձին.
Եւ անոնք գրկած մէկ վառ յիշատակ
Մի զոյգ ուռենու պէս երկա՞ր լացին...

Շիմեց արագիլն իր բոյնը նորէն,
Մաղկաւ նոնենին էս էլ ո՞ւրն անգամ.
Բարի գիր եկաւ Հոռոմի երկրէն.
Վազրիկն էր գրած · «Մա՞յր, շուտով կուգամ...»

Վազրիկ քողուց Ստամբուլ երք դեռ եկած չէր զատիկ.
Բո՞ւնն էր իր տան կարօտը՝ ինչպէս քարտոն է սաստիկ,
Որ իր առջեւ ամեն բան կ'ընէ փշուր՝ եւ աւա՛զ.
Զըրընգ, զըրընգ ֆարվանը տո՞ւն կը դառնար վազն ի վազ:

Փուքով հասաւ նա կարին, զնաց Արծըն, իջաւ Վան,
Եւ մօտ դռան Դաւրէժի փոեց անծայր իր ֆարվան.
Եօրը լսափշիկ գերիներ վրանն անոր կանգնեցին.
Հարիւրն՝ զանձի բեռները սարի նման դիզեցին:

Ամբողջ դաշտը կոներու մի քաղաք էր գունագեղ.
Խո՞ւնիկ կը ծխար ամէն դի, լոյսեր կային ամէն տեղ.
Պահակ էին կանգներ հոն քասուն կտրին զինավառ
Եւ շա՛տ գերի ու ծառա, որոնք համբելն է դժւար:

Կ'անէր ինչպէս փոքրիկ՝ լսրլսինչն արաք ձիերու,
Բաշերն օծած լուսնկան, աչքերն նման քո՞ցերու.
Ուղտերն էին տարածւած որպէ՛ս ամպի գորշ դէզեր,
Եւ մօտն անոնց՝ ուղտապանն մի նոր աշխա՛րհ կ'երազէր:

Եօրը գուսան ձեռք առին իրենց քնարն ու բանդիո.
Եւ վէպ ու սէր երգեցին, արկա՛ծ ու ձի՞ն ամպաքիո,
Պանդուխտ տաղերն ողբազին, մինչեւ բոլոր աչքերէն
Լացը մարգրիտ առ մարգրիտ վար հոսեցաւ մեղմօրէն:

Յե՛տո պարերգն սկսաւ շուրջը ոսկի լսարոյկին —
Ծննդան ու դափն ինչեցին, պար բոնեցին այր ու կին.
Դիւրւած քաղաքն էդ գիշեր մնաց մինչեւ լոյս արքո՞ւն.
Ինչպէ՛ս պատմեմ ես իր փառքն, իր զանձն ու իր
նախուրիւն:

Վազրիկ տա՛սն օր կեցաւ վան, բայց տաս տա՛րի էր
կարծես.

Ցերեկն առտուրն իր կընէր շնորհալի, ժպտերես.
Բայց երբ կուգար մուր գիշերն՝ զնդան կ'ըլլար անկողինն
Անոր որ կուռքն էր դարձեր՝ զւարք բաղքի ամրոխին:

Մի սա՛ր միայն կը բաժնէր այն իր պաշտած նւարդէն.
Դոփի՛ւն մը... եւ արար ձին սուն կը ճգէր զինք արդէն.
Սակայն երկիւղն աղէտի մ'այնքան հսկա ու ցաւոտ՝
Ան իր մահեին կը գամէր մինչեւ ոսկի առաւոտ:

Սէրը սիրուն նւարդի՝ Աստծու կրակ էր կտրեր,
Սիրուն իր՝ շամփուրն էր անցեր, օր ու գիշեր կը մրկէր.
Էլ չի կրցաւ դիմանալ էդ բարկ, անհար կրակին.
(Պայծառ մնա՛ հօրդ սունք, ոսկի նրագն իր յարկին):

Ամսի թիւն էր տասներեք. օրը կ'ըլլար իրիկուն.
Կանչեց պետն իր քարվանին — Գիսակն բարի ու խոկուն,
— վարպե՛տ, ըսաւ, լաթերուն բաժնէ մէկ մէկ նո՞յն քսակ,
Ճամբա հանէ՛ քարվանը երբոր ծագի արուսեակ.

Ապա հեծաւ իր սեւ ձին, մի բա՛ռ մնջեց գորովի.
Բացաւ նժոյզն իր ոռւնզերն, տնկեց վիզը կորովի,
Քակեց նըման ջրվէծի անզուսպ յորձանքն իր բաշին —
Անտես եղան մուրին մէջ հեծեալն ու ձին ու փոշին...



Մա՛յր, երէկ գիշեր չա՛ր երազ տեսա.
Կո՛ւր մը էր շողերով մեր այգին հասա.
Խաղողի էր հասեր քուփի քուփ տուա՛տ,
Ժպտի պէս շիկնո՛տ, բաղցր ու ոսկեհատ...

Վազրիկս էլ ներմակ ձի նստած տեսա
Շքե՛ղ ու զւարք որպէս նոր վեսա.
Արազ դռոյքով մտաւ մեր այգին —
— Ծարա՛ւ եմ, ըսաւ, նւա՛րդ, իմ անգի՛ն...

Եօրն արծաք փարչով քամեցի զինի.
Ո՛ւր ծորեց սի՛րտս էլ — լացող ուռենի'.
Ապա լեցուցի երկու ոսկի բաս.
— Դու այգին հասար դաժա՛ն, վազն ի վազ:

Վազրիկի նժոյզն տեսֆէդ խրտչեցաւ.
Ու ձեռքի զինին բասէն բափեցաւ
Եւ կուրծքը ներկեց մի բարմ վէրքի պէս —
Զին էլ կարմրեցա՛ւ արիւնն է ինչպէս:

Դո՛ւն էլ սեւերով պարել սկսար —
Աշ ձեռքդ էր կարմիր արեան հաւասար.
— Պարի՛ր, իմ հարսնիկ, բ-ո՛ղ որդիս ցնծա՛ —
Հսիր ինձ, յանկարծ քունիս արբնցա՛...

— Երազդ է բարի, իմ սիրուն նւարդ,
Գինին խնդուք է, ու ձին էլ մե՛ծ բախտ.
Քընի մէջ արիւնն ու վէրքն է բա՛րի.
Գուշա՛կն է ըսեր. անցաւ եօր տարի:

Էլ շուտով կուգա որդուս կարաւան,
Կ'անցնի թիւգանդիոն, կ'իշնէ Արծն ու վան
Ու բարձած վարդիւղ, զարդ ու անքիւ գանձ
Կուգա քեզ կարգել բամբիշ փառապանձ:

Գիշերն ո՞ւշ էր երբ Վազրիկ հասաւ Ռստան ծառաշատ.
Ճամբան ամբողջ կը բուրէր լելակ ու վարդ ու փշատ.
Ծաղկեր էր քուփ ու պարտէզ, ծաղկեր անուշ լուսնկան,
Ծաղկեր էր իր հոգուն մէջ սէրի վարդը դիւքական:

Բլրի լանջին երեւցաւ իրենց տունը հնամի,
Որի գլխէն անցած էր հազար փորձանն ու քամի,
Բայց դեռ կանգուն կը մնար մի ժայռի պէս անսասան.
Վազրիկ մնջեց. «Ո՞վ իմ տուն, վառքի օրերդ է՛լ հասան»:

Մի քուրմի պէս երկիւղած՝ բացաւ բակի դուռն արոյր.
— Ներսն էր փրքեր քափուր վարդ՝ շիկնու ինչպէս է
համբո՛յր.

Բացւեր էր բոյլ նունուֆար՝ աստղի նման՝ գուռին շուրջ.
Բակը դըրախտն էր աննառ՝ համակ փրքիր ու անուրջ:

Փութով նժոյգն իր կապեց ամուր օղէ մը երկար,
Ո՛ւր ձին գուռին դիւքական ըմպեց աստղ ու լուսնի կար.
Եւ զով սիւմէն վար քափած նոան քերքեր կոլսելէն՝
Սիրտը նուռի պէս փրքած՝ Վազրիկ մտաւ տան դոնէն:

Ինչպէս ստւեր՝ սանդուլսն է Վազրիկ սողաց դէպի վեր,
Սենեակն ելաւ Նւարդի՝ անձա՛յն ինչպէս մի ստւեր —
Ու քովն անոր սնարին կեցաւ լուռ ու հեւագին.
Լուսնի շողը կաքեր էր մարմար աչքէն երդիքին,

Եւ շուրջ դէմքին Նւարդի լոյսէ պսակ էր կապեր.
Սեւ մազն անոր ծովի պէս բարձին վրայ էր քափիեր.
Դէմքը՝ վնիու երազի եւ բիւր քոլքի էր մասնան,
Որ մեծ գուսան մ'էր զրած եւ այն կնեած յաւիսեան:

Եօքը տարւա երա՛զն էր մարմին առած իր առշեւ.
Ե՛դ դէմքն ուղղած իր նամբան՝ ինչպէս անմուտ վառ
արեւ,
Էդ կեռ յօնիերն էր յիշած երբ կապած էր ծիածան.
Էդքան սիրուն՝ չէր տեսած ո՛չ մէկ պատկեր ու արձան:

Այնչա՛փ մեղմ էր իր շունչը, կարծես երբէք չէ՛ր շնչեր,
Բերանն հասուն մի նուռ էր, կարծես միս ու արիւն չէր.
Կոպէրն իր նուրք՝ ամպի պէս ծածկեր էին իր աչեր.
Հրեղէն կարա՛պն էր, որ մի կար լիի ափին կը հանգչէր.

— Նւա՛րդ, հոգեա՛կ, իմ անգի՛ն, Վազրիկ մեղմով
փսփսաց.

Մոլար նամբորդդ է եկեր, բա՛ց ծով աչքերդ ու վեր կա՛ց.
Սիրու մէ՛կ բառ խօսէ ինձ, մեռնիմ տանար քն քերնին —
Ապա դողով սպասեց՝ ինչպէս լացող ուռենին:

Նւարդ աչքերն իր բացաւ, էդ ինչ աննառ քերկութիւն.

— Վազրի՞կս ես դու քէ՛ երազ, քո՞ւն եմ արդեօֆ քէ
արքուն

— Վազրի՞կդ է որ քեզ կուգա՝ քողած իր գանձն ու
քարվան.

Նւարդ ոտքի էր ելած՝ ինչպէս լոյսի շատրւան...

Եւ գիրկն ինիկան իրարու մի զոյգ շողի հանգունակ,

Բերան քերնի ծաղկեցան ինչպէս երկու բարունակ.

Ապա ամխօս դէմ առ դէմ անյագ իրար դիսեցին —

Մի զոյգ սիրող լուսահաւ՝ մքուն ձգուած առանձին...

Վազրիկ հանեց մի մանեակ՝ ամբողջ մարգրիտ ու սուտակ

— Եւ այն կախեց Նւարդի կարապ վլզէն սպիտակ.

Ու եօքն անգին մատանի՝ եօքը տարւա իբր նշան՝

Անցուց անոր մատները քնին շնչպէս զրշուշան:

Հանեց պսակ մի շենդ՝ տասը աստղէ յօրինւած՝

Մէջտեղ շողակն մի արեւ, ասես սիրով երդեհւած,

Եւ այն դրաւ Նւարդի սիրուն գլխին, եւ ըսաւ.


— Իմ սէ՛ր եւ իմ քագուիկ, վառքի մեծ օրբդ հասաւ...

— Վազրիկ, տանջւած իմ գլխին դո՛ւ ես լոկ քագ ու
պսակ.

Ու վառքս՝ որպէս բարտենի ձգուղ դալար էդ հասակ.

— Բերեր եմ քեզ անբաւ գանձ, ապրանք, գերի ու գոհար.
— Սիրտըս միայն քեզ կուզէ, ի՞նչ ընեմ գանձն ու
աշխարհ...

Գիշերն ուշ էր, երբ անոնք խոր քուն մտան լուսնի հետ—
Բացւած երկու թարմ կրկն քափուր վարդի հոտաւէտ—
Որ չե՞ս գիտեր թէ արդեօֆ պիտի բացւի՞ն վաղ նորէն,
Առանց անդարձ խլւելու սիրող ձեռքէ մ'անօրէն...



XIV

Լուսաստղն ելած էր արդէն ինչպէս կանքեղ ադամանդ,
Ու կը վառէր տրտմօրէն վերեւ էդ տան հնաւանդ.
Չուի պահն էր քարվանին. նժոյզն՝ սէգ վիզն իր տնկեց,
Եւ բուռն վազքին կարօտը մութին մէջ զի՛ւ վրնչեց:

Թամար ցատկեց իր տեղէն — Խրխիչն իր տան բակէ՛ն
Էր...

Ո՞ր խենք ասպետն էդ ժամին իրեն տուն հիւր էր եկեր.
Կամ թէ չ'ըլլա՛ Վագրիկի քարվանն էր ան սպասած,
Որ շուտ իր տեղն հասնելու համար մքով էր քալած...

Սիրտը դողով՝ հեւագին թամար իջաւ իրենց բակ,
Ուր կը հնչէր սալին վրա արաք ձիու կուռ սմբակ.
— «Որդուս ձի՞ն է սա հրեղէն, մենինի կամար իր վըզին,
Քարվանն էլ դո՞ւն է անշուշտ, անքիւ գանձով միասին»:

Բացաւ բակի դուռն արոյր, որ չոր լացով նըմբռա՛ց,
Դո՞ւրսն էր ամայ'. ծառերու սոսափն անգամ էր լուծ.
Հեռուէն կուգար գետի երգն—ամբողջ կարօտ ու սարսու.
Թամար՝ շփոր՝ ետեւէն գոցեց բակի ծանըր դուռ...

— «Եկողն եթէ Վագրիկն էր, ո՞ւր են քարվանն ու քեռներ.
Շեն որդի՛, հէգ մայրըդ, դարձի նամբիդ քող մեռնէր.
Որի՞ն է էն սեւ նժոյզ... ո՞վ Տէր, մի՞քէ հնար է
Որ հեզ ու քաղցր հարսնուկըս որդուս դէմ դան այս
լարէ:»

«Մի՞քէ իր լացն ու հառաչ կե՛ղծ են եղեր ու պատիր,
Կե՛ղծ են եղեր պահենն ու ծոս. մի՞քէ ժամը՝ ծնրադիր
Նատած' փոխան աղօք-քի՛ օտար սէ՛ր է կարդացեր.
Ո՞վ է տմարդ էն ասպետն, որ զաւկիս տեղն է գողցե՛ր...»

«Անոր սիրով տանջրւի որդիս ամբողջ եօր տա՛րի.
Կուրծքը բանա բուժին դէմ, գլուխն դընէ ժեռ քարի,
Խսկ իր սէրի առարկան, ծոցը բանա գողերուն,
Ծաղրէ որդիս, կեանքին թոյն խառնէ, հացին էլ արի՛ւն...»

«Օտա՞ր աղջիկ, դո՞ւ մեր տուն մտար որպէս իրեշտակ,
Ըսինք,՝գարո՞ւնն ես ծաղկած, արեւն ունիս կրախիդ տակ'。
Հիմա չար դե՞ւն ես, մեր սիրտն՝ ամո՞ւր բռնած կը
ֆամե՞ս.
Խարթա՛ծ որդիկ', արեւառ ճակտիդ մատա՛ղ լինիմ ես...»

Թամար զգո՞յշ, հեւալէն սենեակն ելաւ իր հարսին —
Շնչառ հասաւ բարձին քով, որի վրա միասին
Երկու գլուխ նշմարեց եւ ո՞ւր լսեց երկու շունչ.
Մի դո՞ղ ինկաւ ծունկերուն եւ իր հոգուն մէջ՝ մոռունչ..

Մի պա՛հ ուզեց նա նետուի վրա պատի էդ գողին,
Ակունիքովն իր պատուել կոկորդն հարսը խարողին,
Եւ կամ նանկել կեանքն անոր՝ ձագը խլած վազրի պէս,
— Վախցաւ, որ իր ուժը զինք կրնար դաւել վերջապէս:

Յանկա՛րծ իր քով, պատէն կախ տեսաւ զրահ ու զէնքեր.
Մի գանձի պէս՝ իր ձեռքը արաք դաշոյն մէր ինկեր,
— Աղտն, որ դու տան քսեցիր քող այն սրբէ քո արիւն
Ըստ. անոր կուրծքին մէջ խրեց հատու էդ դաշոյն...

Յատոտ մոռունչ մէր պոռքկաց գարնւած հսկա էդ լանջէն
— Նւա՛րդ, սրտիս ի՞նչ կ'ըլլա. զանգերն ինչո՞ւ կը
հնչեն.

Նւարդ ցատկեց իր տեղէն. «արի՛ւն, արի՛ւն, ո՞վ Աստուած,
Վազրի՛կ, դո՞ւ ես կը տեքաս. դո՞ւ ես արդեօֆ գարնւած...»

— «Կուրցէ՛ք աչքե՞ր, խլացէ՛ք իմ չար, անտէր ականջնե՞ր.
Կուրծքը, որ ես պատուեցի, մի՞քէ զաւկիս յաղք լսնջն էր.
Նւա՛րդ, վասի՞ր նրագը, մեր տան նրա՞զն է մարո՞դ...
Ո՞վ է լսեր որ դառնա մայրն իր որդու սեւ զրո՞դ...»

— «Ես ի՞նչ աղու կը հնչեն զանգերն արծաք՝ քարվանիս.
Նւարդ դուռէն դո՞ւրս նայի՛ր... ինչո՞ւ ապշած կը
կայնիս...»

Մումի շառ լոյսն էր ինկեր դէմքին վրա վազրիկի.
Աչքերն էին նւաղուն նման մարող կրակի:

Կարմիր դաշոյնն ձեռքին մէջ թամար անշարժ էր կեցած,
— «Անսիրտ Աստուա՛ծ, անէ՛ծք մեզ... Գուշակն էսպէս
չէ՛ր պատմած.
Ուկի ու փառք կուզէի — սեւ ու արի՛ւն կամեցար.
Որդիս գրկել տենչացի — դահինն ըրիր ինձ խելա՛ր...»

Նւարդ սեղմեց իր քոռունցքն, որմէ արիւն կը կարեկ.
Կարմրեր էր աչքն՝ արիւնէն, կարմրեր՝ ներմակ իր
լարեր.
— «Զեռքը չորնա՛, սեւսիրտ կին, ինչո՞ւ կուրծքս էլ
չի բացիր.
Դո՞ւ որ լոկ փառք փնտունցիր ու հարսդ էլ բո՞զ
կարծեցիր...»

— «Մայրի՛կ, այստեղ մօտեցի՛ր... տե՛ս խոնջ որդիկ է
եկեր...
Ի՞նչ... քէն ունիս ինձի դէմ... հոգեա՛կ, ինչու ես փղձկեր»
Նւարդ լուեց սեւուկէն քանի ու ներմակ մի սաւան,
Անով փորձեց կեցնել քանդւաղ կրծքի շատրւան...

— «Նստէ՛... Նւա՛րդ, բարձիս քով... անո՞ւշ նայէ
աչքերուս...
Զըրը՞նգ... զըրը՞նգ... կը լսե՞ս... բերէ՛ք քողեր
ուկեհի՞ւս...
Գոհա՛ր բերէ՛ք տուփերով... է՛ս էլ հինան է յարգի...
Բոնի՛ր ձեռքէս... վառեցէ՛ք ուկի շահերն ի՞մ փառքի...»

«Բա՛յց դու կուլա՞ս... պաշտելի՞ս, դէմքիդ քողն ի՞նչ
յարմար է...
Աչքերդ անգամ մէլ տեսնեմ... ձեռքը սառ ու
մարմա՞ր է...
Զըրը՞նգ, զըրը՞նգ... բաց... դուռը... քարվանն է այն
հեւասպան...
Լոյսերն... ինչո՞ւ... մարեցի՛ք... զո՞ւր... զո՞ւր ցո՞ւրտ
է... ու խաւար...»

Անցաւ գիշերն ահաւոր որպէս տեսիլ մը ցաւոտ.
Ու վրա քաղքին ծաղկազարդ՝ իջաւ ոսկի առաւօս.
Զոյգ զոյգ սարեկ ու ծիծառ՝ ծաղկուն ծառերն ըրին թառ
— Կոտուց կոտոցի մնջելով հնչուն սիրերգ մը անհան :

Ամէն մի տան երդիքէն ելաւ ծուխը ծիրանի.
Վա՛ռ էր ամէն մէկ բոնիր, ամէն ակուր ընտանի.
Միայն սեւսիրտ նւարդի տունն էր անծո՞ւն, անկրա՛կ.
— Գրողն դուռէն էր մտեր եւ այն բողեր աւերա՛կ...

Նւարդ մագերն փետսելով դէպի Վազրիկ կը խուժէր —
Վատահ՝ որ բարկ համբոյրով պիտի խոր վէրքն էդ
բուժէր.
Եւ էն շքեղ պարմանի արխինն սառած շուրբերուն,
իր խենք պարը կը դառնար որբուկ եղնիկն էդ սիրուն :

Մերք կը վազէր դէպի բակ, ին՞ն ուր նժոյզն էր կայնած.
Ճակատն անոր կը պազնէր՝ բաշին հետ մազն իր խառնած
«Քաջիս հրեղէն երիվա՛ր, իմաս կելնէ իմ ասպիտ,
եւ կը բոկի դէպ աստղեր՝ ինձ էլ առած ձեզի հետ...»

▲

Հեռւէն, վաճա նամբի կողմ ելաւ փոշին ոսկեղէն,
ինչպէս մի ամպ երկնիքի դաշտին վրա լուսեղէն.
Ու հետ անոր զըրընգուն զօղանչն արծար զանգերուն,
եւ հետ անոր վըրբնջիւնն հազար արար ձիերուն...

Մօտիկ բանող մշակներն մոոցան ցանքերն ու պարտէզ
երբոր քարլանն Վազրիկի հապա՛րտ ելաւ ի հանդէս. —
Զըրընզ, զըրընզ մօտեցաւ. Ոստան մարդէ դատա՛րկ էր.
Ամէն դէմքի զարմա՛սի կար, ամէն շարքի էլ՝ գով ֆե՛ր.

Հովիւն կըսէր — «քիւն ասոր մե՛ծ է նոյնիսկ աստղերէն,
երբոր լուսիանին է մտեր, հօսերն երբ դեռ ֆնե՛ր են...»
Ասպիտ մը քէ — «Սողոմոն էսքան զանձ չէ՛ ունեցած».
Նաւորդն. «Ասոր չափ աւազ ո՛չ մէկ ծովեզը եմ
տեսած...»

Վազրիկ բերանն իր կնքեց ինչպէս մի տուփ դիւք-ական.
Փակեց աչքերն կարօտած՝ մահի բնով մշտական.
Նւարդ դիսեց այն երկա՛ր, անլաց հեծքով մը քանդիչ.
Ապա յանկարծ արձակեց սո՛ւր եւ վայրագ մի քրքիջ...

Թամար մէ՛կ մը նայեցաւ ձեռքի արար դաշոյնին —
Չէ՛, այդ քրքիջն աւելի՝ հատու էր ու մահագին,
Մէկ էլ որդուն նայեցաւ, որ մե՛ծ քափուր վարդի պէս
Վէրքը կրծքին՝ կը պառկէր. հա՛րսն էլ սուշակն էր
կարծես

Որ էդ վարդով խելայեղ՝ կերգէր ու պար կը դառնար.
Մերք օող ձգած իր գլխին՝ լուռ ու անշարժ կը կենար.
Մերք էլ ծուած վազրիկի ականջն ի վար կը մնջէր.
«Վէ՛ր կաց, հոգուս սիրական, գուշակն էսպէս պատմած
չէ՛ր...»

Նորէ՛ն պարել կըսկսէր. «մա՛յր, տե՛ս քիրեռն էս ոսկի,
Թեւերն նախշուն են ինչպէս աչքերն անուշ՝ վազրիկի...»
Եւ կը վազէր շուտի պէս նւարդ անոր ետեւէն.
Որ իր կեանքի երա՛զն էր, ինքն էլ՝ անոր խենք գերին...

— «Գլխի՛դ փուլ զա երկինքը, քա՞ր եմ, ինչպէ՛ս
դիմանամ,
Անրախտ նւա՛րդ, եերի՛ք է մերէ՛...ա՛յս, բող ես
կուրնա՛մ...»
Մէկ էլ կուրծքին մէջ խրեց դաշոյնն էդ սո՛ւր, արխինուտ.
Մրմո՞ւնչ մըն էլ...եւ թամար զնաց պառկիլ որդուն
մօս...

Խոկ դեռ նւարդ՝ ամտարքե՛ր իր խենք պարը կը դառնար.
Մերք էլ կուլար ողբազին ինչպէս ջարդող մի քնար.
Կամ զիլ ու բարձր կը քրքչար. «Գուշակն էսպէս պատմած
չէ՛ր».
Մերք էլ քիրեռն բոնելու տեսչէն կարծես կը բոչէր...

«Երեկ'կ էն տանն, որ տէ՛րն է էսքան աննառ նոխութեան»
Ու կը քալէր դեռ քարվանն, որ ծայր չունէր ու վախնան.
Եւ ողջ Ոստան կ'ունինդրէր կարծես վէպի մը կախարդ,
Որ եին գրքէ մ'էր երգած վարպետ գուսան մ'ալեգարդ:

Ու մեծ գետի մը նման քարվանն անվերջ կը յորդէր՝
Իր ծոց ժողուած անքիւ գանձ, բուրմունի ու շալ
ու գարդէր.

Ճոքը հասաւ վազրիկի անտէր դրան առջեւ գո՛ց —
Ու են կեցաւ՝ կազմելով մի ծո՛վ ծփուն, ալեկո՛ծ:

Գիսակ իջաւ նժոյգէն. դէմն էր բակի դուռը մեծ.
Թակեց փակ դուռն ամրակուռ - ներսէն լոկ ձին վըրնջեց.
Նարէն քակեց անհամքեր — գո՛ւռն էր միայն որ կերգէր.
Երրորդ անգամ որ քակեց — նւարդ առջեւն էր կանգներ:

— «Ողջո՛յն, չբնաղ տիրուիիր, քարվանն բա՛րով հասեր
է. — «Կեցի՛ր, վազրիկս ես կանչեմ — վարդը սրտին՝ պառկի՛ր
է. .

Հեռո՛ւ նամքէ նա կուգար՝ տանջւած ու շա՛տ յոգնած էր.
Մայրն էլ կարծեց քէ օսար մ'էր որ ծոցը պառկա՛ծ
էր

Գիսակ շփոր նայեցաւ զարնւած էդ որբ երէին.
Մազերն ալիք առ ալիք մինչեւ ծունկերն կ'իջնէին,
Դէմքն էր գումատ մոմի պէս, կարմքեր էր լաքն սպիտակ.
Նայւածն էր մուր ու պարապ՝ ինչպէս անդունդն
անյատակ:

— «Ի՞նչ կը նայիս ձեռքերուս, պարսիկ եինան է յարգի.
Պատանիք բերի՞ր մայրիկին, որ են անձայն կը պառկի՛ . . .
Տե՛ս, տե՛ս քիրենն ի՛մ ոսկի — լանջը կարմիր կակաջ է.
. . . Կեցի՛ր, ձա՛յնն է վազրիկս, զարբնե՛ր է . . . ինձ կը
կանչէ

Ըստ բուժի պէս արա՛գ խուժեց սենեակն աղէտին.
Սրեւն ինկած էր երդէն, եւ ողջ մահինն ու գետին
կապէր էին լերդ արիւն. Թամար պառկած որդուն քալ՝
Անար նակատ կը շոյէր կարծես սառած իր ձեռքով . . .

Վազրիկն էլ բա՛ց աչքերով դարձեր էր դէպ լուսամուտ
Ուրկէ քարվանն կ'երեւնար՝ առտւա փառքով օծանուտ.
«Վէ՛ր կաց, անուշ սիրակա՛ն, անծայր քարվանն էլ
հասաւ».

Կանչեց նւարդ. ու մէկ էլ՝ իր խօլ մահպարն սկսաւ . . .

Գիսակ, որ լո՛ւռ՝ նւարդին մինչեւ դուռն էր հետեւած
Տեսաւ արիւնն ու վէրքեր, տեսաւ կարմիր արարած —
Եւ հասկցաւ քէ աղէտն շանքի նման իջած էր.
Գիտցաւ ինչո՞ւ սիրահաւն վարդը լալէն գժւած էր . . .

Լալով մահնին մօտեցաւ էդ սէգ բարի ծերունին.
Ու գիրկն առած զանգրահեր գլուխն՝ անբախտ պարմանին
Օծեց մի հօր համբոյրով՝ սառած նակատն ու այսեր.
«Ինչո՞ւ ինձ չը լսեցիր, ինչո՞ւ քողիր տունդ անտէ՛ր

Գիսակ կանչեց քարվանն երկու հզօր գիտնական,
Որոնիք կախարդ դեղերով եւ քանիկ իւղով պատւական.
Մօրն ու որդու դիակը յաւէտ անեղծ դարձուցին,
Երկու կոյսեր էլ անոնիք փարքամ լաքով պնդնեցին:

Ապա բերին հոտաւէտ փայտէ երկու սնտուկներ —
Մէ՛կն էր բանւած սատափով, մէ՛կն էլ ոսկով ծեփուն էր,
Ու են ծալ-ծալ մետաքսի մէջ եւ խնիկ ու վարդի
Դրին թամար, ու վազրիկ, որ սիրտն էր հէգ նւարդի:

Յետո ծաղկով զարդարած էդ զոյգ յարգի սնտուկներ
Բարձին երկու ուղտերու. երկու տասնեակ խարշիկներ
Անհուն սուզի նման սե՛ր՝ անոնց պահակ կանգնեցան.
Ու երբ միջինք չէր եղած, նամբա ինկաւ կարաւան:



Եւ կը փուէր դօղանջը հազար արծար զանգերու՝
Տրտո՞ւմ ինչպէս եղերերգ, քաղէ ի քաղ եւ հեռո՞ւ.
Եւ նուրք փոշին խունկի պէս կ'ելնէր ոլոր, օդապա՞ր,
— Կարծես մահի քափօրն էր լալով ինկած նանապարի...

Մէկ նորն անծայր քարվանին արդէն դաշտը հասած էր,
Մէկալ նորն էլ դեռ անտէր դուռին առջեւ կը սպասէր.
Ու հարց կուտար ամբոլսը ամէն մարդի ապշահար —
«Քարվանն ինչո՞ւ էր եկած, ինչո՞ւ արագ խոյս կուտար»

Վերջին ձիերն էլ քողին դուռն էդ մոայլ ու անտէր.
Բայց դեռ Նւարդ՝ տենդագին իր քակն ու տուն կը դիտէր,
Որ իր սէրի ու վշտի ամուր վանդակն էր եղած.
Բաժնել զինք այդ անցեալէն, մի՞քէ հնար էր, Աստւած:

Մինչ կը հոսէր քարվանը՝ մի գետի պէս ոսկեջուր -
Արեւն քեկած էր սարին, կարմրեր էր դաշտ ու բլուր՝
Խորունկ քացւած վազրիկի լանջին նման վիրաւոր.
Շօրօր կ'երթար դեռ քարվանն ինչպէս մի ամպ հեռաւո՞ր:

Նւարդ իր տանն նայեցաւ որ էլ կնքւած դամբանն էր,
Ապա կախարդ քարվանին, որ հետն առած կը տանէր
Վազրիկն անուշ եւ արծակ մազերն հովին ցանելէն
Խուժեց դէպի կարաւան, որ խոյս կուտար զնգալէն:

Ի՞նչ որ երբեմն նա ունէր — անցեալն ու սէր ու երազ —
Եւ ինչ որ էր իր անձը, եւ իր պատկերն հեզանազ —
Յանձնած էր նա քարվանին, որի տրտում ստուերն էր —
Անոր պիտի հետեւէր, ո՞ր մէկ նամբէն այն քալէր...

Եւ կը զնգար հէֆեաքը հազար ոսկի զանգերուն —
Սիրու կանչին պէս դիւրիչ, մի ողբի պէս գալարուն.
Ու կը վազէր շուքի պէս Նւարդ անոր ետեւէն,
Անծայր նամբէն, որ արդէն որք կը մնար արեւէն...

ՃԱՄԹԵԼԸ

ԾԱՄԹԵԼԸ
(ՎԵՐԱՄՇԱԿԻԱԾ)

Սիմանի սէգ կատարէն,
Օրօ՛ր, շօրօ եա՛ր,
Թեւ առաւ Սինամ կաբաւ,
Հուրն ի հրեղէն եա՛ր.
Շէկ տղէն շող-լող տալէն
Օրօ՛ր, շօրօ եա՛ր,
Հանց երազ ծովափն ելաւ,
Հուրն ի հրեղէն եա՛ր:

Բոժոժներն զըրբնգալէն
Սօնա աղջիկն հոն կանգ առաւ.
Մամերու ծանրութենէն
Մամքելն կտրաւ ի ծովն ընկաւ:

— Իմ վըզի վզնոց կուտամ
Դէ՛մ հանի՛ր ծամքելն ի ծովէն.

— Լողորի մէկն էլ ես եմ,
Զե՛մ հանի՛ր ծամքելն ի ծովէն:

— Իմ կարապ վզիկ կուտամ,
Դէ՛մ հանի՛ր ծամքելն ի ծովէն.

— Լողորի մէկն էլ ես եմ,
Զե՛մ հանի՛ր ծամքելն ի ծովէն:

— Իմ կամար ընքւեր կուտամ,
Դէ՛մ հանի՛ր ծամքելն ի ծովէն.

— Լողորի մէկն էլ ես եմ,
Զե՛մ հանի՛ր ծամքելն ի ծովէն:

— Իմ չինար հասակ կուտամ,
Դէ՛մ հանի՛ր ծամքելն ի ծովէն.

— Լողորի մէկն էլ ես եմ,
Զե՛մ հանի՛ր ծամքելն ի ծովէն:

- Իմ կակաջ քերան կուտամ,
Դէ՛, հանի՛ր ծամբելն ի ծովէն.
- Լողարի մէկն էլ ես եմ,
Զե՛մ հանի՛ր ծամբելն ի ծովէն:
- Իմ սրտի՛կ ֆեզի կուտամ,
Դէ՛, հանի՛ր ծամբելն ի ծովէն.
- Իմ ջուխտակ աչքիս վըրէ՛ն
Ծամբելն հանեմ անտակ ծովէն:



— Եար ունիմ, եար ունիմ,
Եա՛րս է դպար չինար ծա՛ռ
Եար ունիմ, եար ունիմ,
Խնձոր քալիմ, եկ ինձ տար,
Եար ունիմ, եար ունիմ,
Շէկիկ լոգար սիրահա՛ր,
Եար ունիմ, եար ունիմ,
Մէկ պագն ուզես, երկուսն ա՛ռ:

— Զա՛ն աղջիկ, ֆեզի համար
Օրօ՛ր, շօրօր եա՛ր,
Եօր ծովի տակ կ'իշնիմ ես
Հուրն ի հրեղէն եա՛ր:
Նոր ծամբել ծամիդ համար
Օրօ՛ր, շօրօր եա՛ր,
Շառ ամպէն կը հիւսնմ ես
Հուրն ի հրեղէն եա՛ր:

— Ինձ քաշել մի՛ տար կարօտ,
Շո՛ւտ ինձ արի ուսիդ նարօտ.
— Բարով գա էն աննառ օր,
Իմ վառ արեւ եւ իմ աստոր:

- Իմ վզիկ մատա՛դ ֆեզի,
Դէ՛, շուտ արի՛, ուսիդ նարօտ,
- Քո վզիկ պերն մարմար սիւն՝
Պսակ կապած քարի լուսուն:
- Իմ ընթեր մատա՛դ ֆեզի,
Դէ՛, շուտ արի՛, ուսիդ նարօտ.
- Քո ընթեր երկնից կամար,
Լողար տղէն ֆեզի մատադ:
- Իմ քերան մատա՛դ ֆեզի,
Դէ՛, շուտ արի՛, ուսիդ նարօտ.
- Քո քերան պատւական նո՞ւր,
Նոան գինուց վա՛ռ քն համբոյր:
- Իմ հասակ մատա՛դ ֆեզի,
Դէ՛, շուտ արի՛, ուսիդ նարօտ.
- Հասակդ է իսպահան ո՛ւռ,
Հպարտ կանգնած կալերու դուռ:
- Ի՞նչ ունիմ մատա՛դ ֆեզի,
Դէ՛, շուտ արի՛, ուսիդ նարօտ.
- Ինձ համար արծով քե՛ւ ես,
Վառ ծիածան, հուր-արեւ ե՛ս....:
- ▲
- Եար ունիմ, եա՛ր ունիմ
Խնձոր ունիմ, կծած է,
Եար ունիմ, եա՛ր ունիմ,
Չորս քոլորն արծըրած է.
Եար ունիմ, եա՛ր ունիմ,
Աղբէրս ուզեց չը տոի,
Եար ունիմ, եա՛ր ունիմ,
Ասի եարի կծած է:

ԼԵՅԼԱ ԵՒ ՄԵԶՆՈՒԻՆ

ԼԵՅԱ ԵՒ ՄԷԶՆՈՒՆ

Ա.

Սարի գիշե՛ր - երա՛զ՝ հիւսւած աստղերով,
Թռվիչ բոյրի եւ հեշտանիքի անտակ ծո՛վ,
Ելաւ ծածկեց հանդերն ու գիւղն ու բլուր
Եւ հեշտ բնին ամենն ըրաւ անձնատուր :

Մշակ Մէջնուն - անհայր որդին Դադօին
Քուն կը մտնէր հանդի դատէն իր դարձին.
Եւ մի աղջիկ դալար սալւի ուրի պէս -
Երազին մէջ, նազանիներով կուգար տես :

Կարծես մի զոյգ կախաւ էին լուսածին -
Թէկւ ոսկի լոյսովն բարի արեւին
Իրարու ժաղցը աշքերուն մէջ տխրանյշ
Եւ ոչ մէկը իրեն պատկերն տեսած էր :

Ու հմայքէն էդ երազին հրեղէն՝
Եւ կարօսէն էդ աղջկան լուսեղէն,
Մէջնունի սիրտն ամբողջ օրը կարիւնէր
Մի եղնիկի լանջին նման կարեվէր :

Պատերուն տակ խոփերը ժանգ կապեցին
Ու բանտի պէս փակւած մնաց գոմին դուռ.
Դաշտի ճամբին սայլերն է՛լ չի ճռա՛ցին,
Եւ ցանքերը մնացին չոր ու անջուր :

Մէջնուն զարնւած, որը կոռունկին էր նման,
Որ անկարող իր երամին հասնելու
Մի լնի եզր արիւնելով կուգա ման
Օրհասական - ու երամէն շատ հեռու :

Նա անտառին երգեց իր ցաւն ահազին
Եւ իրեն հետ լացաւ իր սազն աղերել.
Ու քերքերը՝ թօշնած դողէն էդ երգին՝
Վա՛ր քափեցան ինչպէս մեռած թիրեռներ:

Նա իր վերքը բացաւ գետին ու ակին.
Եւ ափերուն վրա ծաղկեցան տրտմազին
Վայրի վարդեր ու կարմրագեղ կակաչներ -
Ինչպէս վերքէ կարող արեան վառ շիքեր:

Եւ Մէջնունի սիրող մայրը սեւաբախտ,
Որ իր որդու թագուն էդ վերքն էր տեսած,
Մի առաւու անոր վզին նետւեցաւ.
Մազերը խորի՝ ինչպէս անտառն հողմակոծ՝
Անոր ուսերն ի վար ինկաւ լալազին:

«Ով մահի մէջ քալող իրեղէն Մէջնունիս
Տրտում ստև'ր, ասա քո մօր ցաւագար,
Մօ'րդ, որ քեզ հետ շիրմէ շիրիմ կը տանիս.

Մօրմէ՞դ է լոկ պիտի քո վերքը պահես,
Որմէ լեռը հազար կակաչ է բացեր.
Լոկ ծոցի՞ս մէջ լացըդ քափել կը մերժես,
Որմէ հովը հազար հառաչ է հիւսեր:

ԱՌԽ, էդ վերքը, որդեա'կ, ծա՛նը է քո սրտին.
Անոր կէսը քո՛ղ սրտիս մէջ ես կրեմ.
Վշտիդ քեռն վարդ հասակդ կը կֆի.
Թո՛ղ որ կէսը ես ուսերուս քեռցնեմ...»

Մէջնուն բացաւ իր սիրտը մօրն, ու թողուց
Որ իր վերքի անդունդներուն նա նայի.

- «Քներ եմ թէ չէ՛, իմ անբախտ մարե՛,
Լուսէ մի աղջիկ - վարդ ու ամբարէ
Կամաւի քէլքով, երկնային փելքով
Անուրջի պէս զինջ կը կայնի իմ քով...

Բլբուլի նման նա կը նվլա -
Երեսն է արեւ, շրբները՝ լալա,
Հէնց բռնել կուզեմ - ինձմէ խոյս կուտա -
Հրեղէ՛ն երազ - եւ կա՛ եւ չկա՛...

Կարօտէս կառնեմ շահենի թեւեր,
Ա՛յ, դու սեւ, չա՛ր բախտ, քո տէրը մեռնէր -
Կը հասնիմ թէ չէ - մի ծով խոր, անձէր -
Կը բացւի մեր մէջ - կընկնին իմ թեւեր...

Կրա՛կ եմ լնիկեր, սեւաւոր մարե՛,
Սիրու բոցն ելեր ու հոգիս կերէ.
Գիշերը որ գա - կարօտ եմ լուսուն,
Օրը որ ծագի - կսլասեմ մքուն...»

Ըստ անոր ցաւով գարնած հէգ մայրը,

«Անբախտ որդի, մայրըդ ցաւիդ թող մեռնի՛,
Է՛լ ամային ու անապատն է իմ տուն
Մինչեւ կախարդ մի լնակի երազէն
Սիրուդ կարապն յափշտակած քե՛զ թերեմ...»



Օրե՛ք անցան . ու մոռացւած դեղձենին
Նորէն բացաւ իր ծաղիկներն աննման .
Եւ մազերուն վրա ձիւնը , սառն ու փոշին՝
Մէջնունի մայրն չափեց Արտօսն ու Բոհոտան :

Նա գիւղէ գիւղ թափառեցաւ տենդագին ,
Ու կոյսերուն բաժնեց լաշակ ու ծարիր ,
Որով անոնք իրենց աչքին՝ անդունդին
Թովկը կուտան , եւ ունիքերուն՝ երկնի ծիր . . .

Զուրերու ափն յուլունք բաժնեց ամենուն .
Գուցէ վրզէ մը այն կախած միջոցին
Տեսնէր պարիկն իր Մէջնունի իդաներուն
Եւ յուլունքը մարգրիտ կտրէր վիզն ի վար :

Վրանէ վրան նա գինդ բաշխեց կոյսերուն ,
Բէրտորներուն տուաւ սանդր ու հայելի ,
Որ թէ մէկը ժպտէր իրեն պատկերին՝
Եդ ժպտին մէջ տեսնէր նա յոյսն իր զաւկին :

Նա ֆալ բացաւ աղջիկներուն բաղքենի ,
Ու պատմերզեց անոնց վէա ու հեթեարներ .
Գուցէ մէկին բախտը պատմած միջոցին
Իր Մէջնունի բախտն անոր հետ գուշակէր :

▲
Այսպէս չափեց նա դաշտ ու սար առանձին
Մարմին առած մի երազի ի խնդիր .
Եւ ապրեցաւ ժխորն անմիտ բաղաքին
Միշտ փնտոելով որդու պարիկն անբասիր :

Ծա՛տ էր յոգնած , անզօր ինչպէս մի դիակ ,
Երբ կանգ առաւ ափն աղբիւրին Սինջանի ,
Որ մի երգով անմահական ու յստակ
Կերթար լուծւիլ մի լնի հետ արծարի :

Հոն մի աղջիկ , առաւօտէն գեղեցիկ՝
Զեռքն արծար թաս՝ աղբիւրի ափն էր կայնած :

Հասակն անոր գեղեցիկ էր ու փարքամ
Ինչպէս գետի ափին կանգնող բարտենին .
Դէմքը ծագող արեգակն էր նման .
Անոր աչքերն սարը պառկող այծեամին
Աչքերու հուրքն եւ անուշ թովքն ունեին .
Թարթիչները արծրի թեւն լինեին ,
Որ նորածագ արեւի տակ կը թռի :
Շուրթերն անոր համով կարմիրն ունեին
Ընտիր նոան հատիկներուն գինեթոր .
Եւ կարապի անոր վիզը շնորհալի՝
Մարմար քարէն լոյսի նման երկարող
Մի ջրվէժի ուներ հրապոյրն անպատում :

Պատկերն անոր զուրին ծոցը կը շողա՛ր
Եւ աղբերակն՝ անով գերւած՝ ու գինով
Իր մեղեդին եւ ընթացքը կը մատնա՛ր . . .

Սիրուն աղջիկն երբ որ տեսաւ եկող կին
Վազեց , գրով թեւը մտաւ ժպտագին .
Դատարկ պարկը անոր ուսէն վար առաւ ,
Ու նստեցուց այն կանաչին վրա դալար .
Արծար թասով անոր ակէն զուր թերաւ ,
Խմեց ծեր կինն , ու շունչն իրեն դարձաւ ետ ,
Որդու սիրածը գտնելու յոյսին հետ :

— «Աղջի՛կս , դալար մնա՛ հասակդ յախտեան ,
Ու կատարւի փափաքն հոգուդ կուսական :»

Եւ շիկնեցաւ աղջիկն ինչպէս թարմ կակաչ .
Առաւ , պագնեց Մէջնունի մօր դողդոջ աջ ,
Ու ձայն տուաւ . երկու առոյգ հովիներ
Փութով թերին լոշ ու կարագ , կաք ու սեր
Ու ծեր կնոջ հրամցուցին յարգանքով :

Խսկ կոյսն անուշ նստած տանջւած էդ մօր բով
Արեւի պէս անոր վրա կը ծագէր

Իր դիւքական, իր անպատում սեւ աչքեր.
Ապա հարցուց, մինչ բոցի պէս կը շիկնէր.

- «Մէրի'կ, ի՞նչ ցաւ է ֆեզ սարերն էս նետեր.»
- «Գոհար աղջի'կ, լոկ Մէջնունիս անոյշ սէ՛ր»
- «Մէրի'կ, ինչ՞ն են քո նակու կննիոներ...»
- «Չարքաշ կեանքը, եւ հալածանք ու հոգսեր
Եւ որդուս ցաւն են անոնք հոն ակոսեր...»
- «Սաք մազիդ մէջ՝ արծաքն ինչ՞ն է բռւսեր»
- «Մօրն անհուն սէրն ու ջարդըւած իր յոյսեր
Կընեն սեւսաք մազերն անոր սպիտակ,
Սիրտն՝ սեւաւոր, մէջքը կիած ցաւի տակ...»

Լոեց աղջիկն. աչքին մէջ լա՛ց կ'երեւար.
Գիրկըն առաւ գլուխն էդ մօր վշտահար,
-«Թող կատարի որդուդ կարօտն-տանջւած մա՛յր.»
Ըսաւ պազնեց անոր նակատն ու մազեր :

Իսկ Մէջնունի մօր սիրտն իրեն կը խոսէր.
- «Ահա՛ փնտուածդ, քո վարդ հարսը, որդուդ սէ՛ր.»
Եւ իր հոգուն մէջ՝ ցաւերու տակ կործան՝
Կամար կապեց պայծառ յոյսի ծիածան...

Մէջնունի մայրն հարցուց.

«Էա՛կ սիրազին,
Ի՞նչ կոչեմ ֆեզ - տեսի՞լ, հրեշտա՞կ թէ չէ կի՞ն.
Տեսիլ ըսեմ, էն չէ ֆեզ պէս փաղաքուշ.
Հրեշտակ ըսեմ, հրեշտակ ֆեզ պէս չէ՛ բարի.
Թէ կին ըսեմ, հողեղէնի չես նման.

Ո՞վ ես արքեօֆ, եւ ի՞նչ անուն պատւական
Կուտան ֆեզի ծնողք, օտար, ազգական :

Լէյլան անոր ցուցուց հեռու վրաննե՛ր.
- «Կոներն են էն մեծ ցեղապետ Քօչարին,
Որի սահմանն կանի հետ է՛ն սարերուն
Մինչեւ Շիրվան, մինչեւ Տարօն ու Սասուն,

Որի դաշտերն ու արօտերն կ'երկարին
Տիգրիսն ի վար մինչեւ Բոհուան ու Բառին.
Անոր աղջիկն եմ. Լէյլա՛ է իմ անուն...»

Կոոր ձեռքին, ուժ տալով ծեր ծընգերուն՝
Ոտքի ելաւ անբախտ մայրը Մէջնունի.
«Լէյլա՛, աղջիկս, քող շէն մնա՛ քո հօր տուն...
Ըսաւ. տրտում ինկաւ դարձի նանապարհ :

Լէյլան շփոք՝ վազեց անոր ետեւէն.
- «Կեցի՛ր, մէրիկ, մեր տուն կեցի՛ր էս գիշեր.
Մուըլ կ'իջնէ - դուրսն ահ ու գող ու գազան
Դարան մտած՝ պատրաստ որսի կ'սպասեն.
Ինձ եխւր եղի՛ր, Աստուծո հի՛ւր էս գիշեր...»

- Լէյլա՛, աղջիկս, տունըս դարձաւ պրիշա՛կ...
Դու՛ մեծատուն, Մէջնունի՛ աղքատ ու մշա՛կ.
Մարդս շուն լինէր, խեղն ու մշակ չը լինէր.
Դէ՛, դուրս ելէ՛ֆ, գողե՛ր, կատղած գազաննե՛ր
Յոշոտեցէք լսեղն Մէջնունի անբախտ մա՛յր...»
Ըսաւ, լալով բռնեց դարձի նանապարհ :

Լէյլան շշմա՛ծ երկա՛ր անոր նայեցաւ.
Սիրտը վլաւ, ինքն էլ նստած կո՛ւշտ լացաւ...



Մէջնունի մայրն քողուց Սինջան ծաղկաւէտ
Ու տուն դարձաւ, որդու աննար վէրքն իր հետ.
Վատահ գիտէր քէ մի աղջիկ չէր լէյլան,
Այլ սիրավառ մի բոց երա՛զ լուսեղէն
Աշխարհի վրա—իրենց հասէն շա՛տ հեռու.
Որի անհաս պատւանդանին հասնելու
Արծկին քեւերն անգամ տկար կը մնան.
Մէջնուն պիտի վազէ ամոք սուերին,
Ինչպէս մանուկն կայծուիկի ետեւէն,
Լոկ իր մատղաշ սիրտը վէրքով ծածկելու:

Մայրն ու որդին լալով ընկան իրար գիրկ —
Ինչպէս իրար կը գրկեն բուֆն ու խաւար.

— «Մարէ՛, տանջւած ու էդ մաշած կերպարանքդ
Ճիշդ պատկերն է իմ յոյսերուն ու կեանքին:
Ոտքերդ, որ իմ սէրը փնտոել գնացին
Ճամբի խնէն ու փուշէն են վիրաւոր.
Լոկ մի քուրզ է որ մերկուրինդ կը ծածկէ.
Գիշերաքոյր քո մազերու վրա, մա՛յր,
Կարօտն ու վիշտն իրենց ձիւներն են մաղած.
Ե՛ւ աչքիդ մէջ ես պատկերը կը տեսնեմ
Մեռելներուն, որ կեանքի մէջ կը քալեն...
Ըսէ, իմ մա՛յր, աշխարհներէ դիւթական
Որդուդ նարօ՞տ քէ մահածօն ես քերած»:

— Երնե՛կ սիրու նարօտն որդուս քերէի, —
Մահածօնը քող քշնամուդ փայ լինի.
Ես քեզ մօրկանդ սիրող սրտիկն եմ քերած
Որ քո ցաւը եւ խօլ երազն հոն քաղես:

Աղջիկը, որ քեզ այդ մեծ վիշտը նիւթեց
Քո երազի մէջն է միայն որ կ'ապրի,
Քո պատաճու երազին մէջ հրավառ:

Մոոցի՛ր դու այն. Վանա ծովի ափունքէն
Վարդէն սիրուն քեզ հարսնցու կը քերեմ.
Արարատէն կամ քեզի հարս ես կընտրեմ,
Որ աչքը՝ ծով լինի, հասակն՝ ուռեննի...»

— «Բայց, մա՛յրիկ, ին սրտէս ի՞նչպէս ես նոպկեմ,
Թող որ նոյնիսկ երազ լինի լուսառէջ.
Ի՞նչպէս մոռնամ անոր դէմքը հրեղէն
Ու կիմերուն դառնամ, որոնց ծոցին մէջ
Մահու քոյն կա եւ մսի սէրն ահօրէն...»

Ես պիտի ին փնտոեմ ներքեւ արեւին —
Գուցէ որ նա ծիածանի մէջ կ'ապրի.
Անունն անոր պիտի երգեմ գիշերով —
Լուսնկային մէջ գուցէ նա կը քնակի.
Ես էն պիտի փնտոեմ երգով ամէն տեղ
Մինչեւ գտնեմ, կամ մինչեւ ես էլ հզօր
Մի երազի աննիւր գրկին մէջ ընկնիմ...»



Էն գիւղի մէջ էդ ի՞նչ մեծ սուզն է իշած,
Որ կայսերը կուլան էսպէս ցաւագին.
Փողոցներէն որի՞ սեւ նաշն է անցած
Որ բուռ առ բուռ վարդերն էսպէս կը քոռմին:

— Մէջնուն անցաւ սէր ու վշտով թեռնաւոր.
Անո՞ր ցաւազն է աղջիկները կուլան.
Նա իր սէրը փողոցներուն մէջ երգեց
Եւ փնջերը անո՞ր գլխին նետւեցան:

Բէրտորները որի՞ է դեռ կ'սպասեն
Տիկերը լիք սերով, մեղրով, գինի՞ով.
Հովուսիհներն անո՞ր է որ կը կանչեն.
— Նա կը քալէ անտուն՝ ձմեռ գիշերով:

Քան՛ սրտեր քո բարկ սիրով վառեցիր.
Ու քանի՛ կեանի դու քանդեցիր, ա՛յ տղա'.
Ցաւդ ամենքին մի գրքի պէս լա՛յն բացիր.
Ու չը քողիր որ մէկն իրեն քեզ բանա...



Ու շրեցաւ նա ամեն տեղ՝ ամդադար,
Ինչպէս զարնած մատղաշ եղնիկ մը մոլար.
Քարերն միայն իր որք գլխին բարձն եղան.
Իրեն ընկեր՝ սարի աղւէսն ու գազան:

Քանի կ'անցնէր օր ու ամիս ու տարի
Ցոյսի վարդերն կը մեռնէին մի առ մի.
Բայց անմեռ սէրն իր Լէյլային դիւքական
Կ'անէր ինչպէս իրդեհ անզուսպ, խօլական:

Փոշին՝ ուսին, ձեռքին մէջ ցուպը մաշած,
Երկա՞ր նամբէն հասաւ Սինչան ծաղկաւէտ.

Դէմֆին վրա զրկանքն ու ցաւն էր տպւած,
Բայց դեռ սիրու կրակն ունէր իրեն հետ:

Վար առաւ սազն իր խոնջ ուսէն փոշեպատ,
Խմեց ակէն, եւ հոն լւաց իր ճակատ.
Եւ լին ափ, եղէգներու շուքին տակ
Սազին վրա, լացաւ իր երգն սրտաքանդ:

Մի վարդ աղջիկ՝ շաղւած լոյսէ ու բոյրէ
Դեռ չի լսւած սիրու մի երգ շրբներուն,
Կ'առաջանար մօտիկ նամբէն ոսկեման'
Շաղկոց Սարի սինամ կաֆէկ շօրօրով...

Կապոյտ, անփոյթ մի շրջազգեստ սրտիուն
Կը ծածկէր նուրբ հասակն անոր գեղեցիկ,
Ինչպէս խնկի կապոյտ ծուխը ծրիժը փուն,
Որ կը պատէ մարմար սիւներն պացիկ...

Մի զոյգ սանդալ՝ նոր կակաչի պէս կարմիր
Գրկած էին անոր շուշան տոտիկնե՛ր,
Թողնելով որ հազար վայրի ծաղկներ
Բարկ սրունքներն համբուրելէն՝ մեռնէին...

Մէջնուն հանչցաւ փէրին իր վառ երազին –
Երազի մէջ իսկ նա էնքան սիրուն չէր.
Ու սրտին մէջ հազար գարուն ծաղկեցան:

Լէյլան ընկաւ վիզն իր մշակ սիրածին,
Ցորդ մազերու բուրեան ջրվէժը հոսած
Ուսերն ի վար իր սիրական Մէջնունին:

— Լէյլա՛, արդեօֆ էս էլ երազ է անգուք.
Զէ՛, երազւած երանուքի՛ւնն, իմ Մէջնո՞ւն...

Դիւքանքին տակ լուսնկային՝ ին գիշեր
Անոնի բացին իրենց վէրքերն ու կարօտ.
Սէրը անուշ-կարօտը խոց ու փո՞ւշ էր.
Ու ժպտեցան, լացի՞ն մինչեւ առաւօտ...

Երեք անգամ լնի լանջին վրա փաղփուն՝
Լուսին բացաւ նունուֆարի բաժակներ,
Եւ նորածագ վառ արեւին ի ողջոյն
Երեք անգամ անոնք պարպեց արշալոյսն:

Ինչպէ՞ս անցան երեք ցորեկ ու գիշեր,
Ինչպէ՞ս շշուկն մի առաջին համբոյրի,
Ինչպէ՞ս թոփչին երազին մէջ դիւրեկան:

Լէյլայի գլուխն՝ իր հոյակապ կրծքին վրա,
Եւ իր նակատն անոր մազի ծովին մէջ.
Մէջնուն կըսէր լէյլային.

— Լէյլա, հոգի՞ս, արի տաճիմ քեզ հօրս տուն.
Են խեղնո՞ւկ է. այնտեղ թէ ոստ դնես դրւն
Էլ ի՞նչ անեմ վայելին ու գանձն ու երկինք.
Շէ՞ն է չօլը, թէ հոն մեկտեղ բնակինք:

Իմ ա՞րտն է կորք, ոստին ու քար ու քոա,
Բայց հողն պիտի քո ոտքի տակ սարսառ,
Երբ ինձ հետ գաս տափ ընելու Վարոցին.
Պիտի ծլի ցանքս առատ-ոսկեծին...

Եւ հունաքս պիտի ծփա՛ հանց ծով բոցագէս,
Դալա՛ր, դալա՛ր քո հասակի, քե՛զի պէս.
Ու կալոցին շեղչէս՝ ոսկու պէս սրսուն,
Պիտի հանեմ մա՛ս խեղներուն ընդհանուր:

Մէջնունի գլուխն իր ծունկին վրա կախարդած
Եւ նայուածքի երկինքն անոր տարածած,
Լէյլան այսպէ՞ս իր սիրածին պաղատեց.

— «Մէջնո՞ւն, հօրս գառներն արի արածենք
Գիներբուկի պուրակներուն մէջ փրքուն.
Հօ՞տն է անքիւ մեր սիրական գառներուն:

Հազա՛րն՝ անքիծ ու ներմակ են ձիւնի պէս,
Հազարը՝ թուլ քո յօնքերու թովքին պէս,
Ու եօթ հազարն՝ էդ աչքերուդ պէս նախշուն:

Երեք հազար են մեր չուռերն ըսպիտակ,
Որոնց գաժը մարգերուն վրա կը փրկրի,
Ինչպէս Տիգրիս՝ Սուրբ Գէորգի ժայռին տակ:

Կակաչներով ես պիտի քեզ պսակեմ,
Ու պիտի թոյլ տամ որ ներմակ շուշանի
Մանեակդ աստղի պէս վար թափես իմ վզէն
Մինչեւ ոտքերս համբուրելու երկարին:

Մախաղ՝ կողէդ, բերնիդ՝ սրինգն հոգեթով,
Զրերու ափ երք մենք երգենք միասին,
Գառներն պիտի պարեն գրաք մայիսով
Եւ մեր բոլոր նունուֆարներ բողբոջին:

Եւ հովիկը մեր մրմունչէն գինովցած
Մեր հօտին հետ պիտի շրջի շարունակ,
Մաքիներն էլ մեր պատկերէն հմայւած
Ամէն Մարտին պիտի ծնին երկուրեակ:

Երբ բէրւորներն կաքը շալկած տո՛ւն դառնան,
Գառներն իրենց մօր համբոյրին արձակւին,
Մենք էլ իրար գիրկը ընկնենք սիրակա՛ն
Իր մօր կաքին վազող կայտառ ուկին պէս:»



Իրիկունը հէֆեաքի պէս քնաքեր,
Ու քաղցր որպէս էն շարբար-ը դիւթական,
Ուր անհամբար անմահական ծաղիկներ
Կաքի կաքի իրենց մեղրէն են ծորեր
Մի վհուկի կախարդ փարչին մէջ կապոյտ,
Իրիկունը՝ սիրած հարսի պէս անուշ՝
Իջաւ դաշտին ու բալամիգ սարերուն
Եւ մշակի ոսկեծիուն արտերուն:

Ու աստղերն էլ էդ հեշտանիքն սարսուն,
Հրեշտակներու աչքերուն պէս սիրավառ,
Հոյլ հոյլ իջան մքնշաղով վայլելու,
Արտէն դարձող լաներուն հետ սիրահար,
Ժպիտն անուշ՝ գիւղի համեստ կոյսերուն...:

▲

Կաբաւի պէս կըւկըւալէն
Առած վիճակ, վիճկի մէր-
Արեւի պէս փէլքկըւալէն
Սինջան իջան աղջիկներ.

Եւ երգելով-գովզ հիւսելով
Թա՛յստ շինեցին ծաղկազարդ
Բազմեցուցին վիճակն ծէսով-
Բառուն աղջիկ-բառուն վարդ:

Եւ բոլորան էն թախտի շուրջ
(Թող շէն մնար էն տարին)
Ո՞վ չէր հիւսած սիրու անուրջ.
— Հա՛ն, ջան, վիճակն ի բարին.

— Թամիկ ակունքներ առած կուգա
Շէկ ձիաւոր մի տղա' .
Աղջի', ձեռքերդ շուտ դի՛ր հինա —
Քեզ տանելու կուգա նա':

— Զինարի պէս հասակ ունի՛ս
Երնէկ ժեզի', ջան աղջիկ,
Սարով էն կողմ մի եար ունիս —
Քաջ-գովական մի կտրիչ :

— Մարալ աղջի՛կ, կա մի չարկամ
Թու վառ սիրու նամբէֆին.
Դու մի տխրիր -սէրդ է արդար,
Շուտ կը յաղը-ես ամենքին:

— Աղջի, ժեզի հարս պիտի տան
Քաւրառ, հարուստ մի մարդու .
Ուկի ժամար, մետաքս կապան,
Վայե՛լք բաժին ունիս դու:

— Աղջի՛կ, սիրողդ մի հօտա՛դ է
Ծուռ-քուռ թիկնեղ մի տղա .
Երնէ՛կ բախտիդ, բախտը խա՛զ է,
Մե՛ծ մարդ պիտի նա դառնա:

Փարթամ աղջի՛կ, սիրուդ յարմար
Զկա պետ ու մեծաւոր .
Մէկ ժաշ մշակ, սիրուդ համար
Կուգա երկրէ հեռաւոր:

— Է՛ն իմ բախտն է, իմ ջան Մէջնուն,
Ոչ մի պետի չեմ հաւեած.
Ես ի՞նչ ընեմ գանձ ու անուն
Դո՛ւ ես սրտիս լոկ սիրած :

Հսաւ Լէյլան ու սիրածին
Ուսին դրաւ իր երես.
Սիրու երա՛զ արևածին —
Վեհ ու հզօր մահւա պէս :

Նորէն հատնում եւ անքանիք .
Նորէն սիրու հեշտ սանջանիք .
Եւ չքացաւ մարդն ու աշխարհ —
Երկու վառ սիրու — երկու լա՛ր ...

▲

Ամեն աղջիկ իր բախտն լսեց
Սիրու գողով - հեւազին .
Մին էր գւարք, մին էլ տխրեց
Վարդավառի կիրակին :

Ցանկարծ հեռւէն, երուհուալէն
Գեղի լաներն երեւցան .
Կծերն ուսին-շօրօնելէն
Կոյսերն զրի ափ կեցան .

Եւ սկսաւ մեծ ջրախաղ .
Լան ու աղջիկ սիրահար
Կը հալածեն ու կուտան փախ՝
Բայց կը փնտոեն միշտ իբար :

Կալերուն վրա եւ երազող կոներուն,
Հովիւ աղջկա ժպիտմերուն պէս անուշ,
Ծագած էր եօթն անգամ ոսկի արշալոյս .
— Ու դեռ անոնք նստեր էին դէմ առ դէմ :

Երկինքն ու ծովն ինչպէս իրար կը նային
Մէկ մէկու բաղցը աչքերուն մէջ կապտագեղ՝
ինչպէս անոնք երկա՞ր իրար դիտեցին,
Անյագ սիրով եւ բոցավառ կարօտով :

Երբեմն տրտում իրարու գիրկ լաց եղան,
Գեղեցկացած նոյն իսկ հետքն այդ լացին,
Ինչպէս իրար գրկող մի զոյգ բարունակ,
Ինչպէս պայծառ եօթ գոյներու անանակ :

Հեռու սարէն լալկան մի երգ սրինգի —
Հրաժեշտի տրտում կանչը քոչարին,
Հովն իրիկւա սփոեց հունձի դաշտի վրան
Մեռելոցի աղօքին պէս ցաւագին :

Լէյլան յիշեց որ էն-գիշերն էր երբ-ին,
Եւ աչքերէն լացի երկու կաթիլներ
Աստղերու պէս Մէջնունի վրա բափեցան.
Անոնց այրելն զգաց նա իր ճակատին վրա :

— Մօս է գօզանն, ո՞ւր մեր վրանը կը կանգնի,
Գանուկներու զիլ մայիսնը չե՞ս լսեր .
Հօրըս երբամ ու բող կամքովն իր բարի
Մեր ուսերուն ծաղկի նարօտն էս գիշեր :

Երդւէ՛, որ ինձ էստեղ պիտի սպասես
Քե՞զ պիտի գամ՝ ուսիս նարօտն բախտաւոր .
Երբ կակաչներն աստղերու տակ քուն մտնեն,
Քե՞զ պիտի գամ նամբաներէն ցողաքոր :

— Կ'երդւիմ սիրովս, որ մահի չափ հզօ՛ր է .
Կեամիքն շա՛տ քանգ քո անունով ես կ'երդւիմ
Եւ քո շնորհեով, որ լոյսի պէս անմեն է,
Մօրըս կաթի սրբութիւնով ես կ'երդւիմ —
Օ՛ր ու գիշեր քեզի պիտի սպասեմ
Մինչեւ դառնաս, հետըդ բերած լոյսն ու օր,
Դէմքիդ ժպիտ, նարօտն ուսիդ լուսաւոր :»



Վրանին տակ նստած էր ծեր ցեղապետ
Եւ լէյլայի վերադարձն կար ի դէտ .
Ու երբ պայծառ դէմքը իր վարդ աղջկան
Մբնշաղի քոյի մէշէն երեւցաւ
Ինչպէս լուսնակն, որ մուր ամպէն կը ծագի,
Կանչեց անհուն գորովով .

— «Լէյլա՛, չար աղջի՛կ, էդ ո՞ւր մնացիր .
Աչքերս քո դարձի նամբին գալնեցիր .»

— «Երազի մատուռ կեցա երեք օր,
Թասերով գինի բաշխեցի փարչէս
Մինչեւ սուրբ կոյսի դէմքին լուսաւոր՝
Ծաղկեցաւ ժպիտ նոան ծաղկի պէս .
Եւ բաղցը տեսիլքի մէջ նո՛յն էդ գիշե՛ր,
Ինձի երեւցաւ, իմ կորինն, իմ սէր ...»

— «Երազդ մարմնացա՞ւ, եկա՞ւ քո ասպետ՝
Նստած ներմակ ձի՛ գանձ ու փառքի հետ :»

— «Հայր, ե՛լ ու օրինե՛ բախտաւոր լէյլադ,
Ես գտա՛ իմ սէր, առի՛ իմ մուրադ ...»

— «Ըսէ՛, իմ աղջիկ, ո՞ր ծովի արքան,
Ո՞ր հզօր ասպետ, կամ մեծ տանուտէ՛ր,
Էն ո՞ր աշխարհի փարքամ քեզիքամ
Իր սիրտն ու գանձը քո ոստին է բերեր :»

- «Եղ փուն մեծերէն ո՛չ մէկին համար
Սիրող սրտիս մէջ կա խունկ ու տաճա՛ր...»

Հօր նակտին վրա սեւ ամպեր իջան
Ու ծեր հոգուն մէջ կոկիծ անսահման :

- Ըսէ' ինձ, Լէյլա', ո՞վ է քո սիրած.
Մամի՞ն, անազա՞տն, օտա՞րն անաստած....»

- «Գեղջուկ մի տղա, մշակ մ'արեւառ,
Նա' գտա միայն իմ սրտին յարմար....»

- Լէյլան չէ' խօսողն, դեւք զրպարտիչ.
Աստւա՛ծ, դու' եղիք ծեր գլխիս փրկիչ.
Ծե՛ր եմ, տկար եմ, մի՛ աներ հանաք,
Սիրտս մի միջեր քո ժահրոտ դանա՛կ....»

Լէյլան փղձկեցաւ ինչպէս գարնան օր.
Լուսնակն էր ծարեր, ու ջրերն բուռը
Լէյլայի լացին նման լուսավառ՝
Կ'իջնին լքուած բլուրներն ի վար :

- «Մշակը սիրելն, հա՛յր, միքէ՞ մեղք է....»

- «Սո՛ւս, Լէյլա', չա՛րն է ֆեղ հանած խելքէ:
Մեծ ցեղապետի ես ծնունդ ազնիւ,
Էնքա՞ն բարձր ես դու որքա՞ն է արծիւ
Գորտէն, որ նահնի ծնունդն է անարգ.
Տիղմը՝ ուամիկին, քո բաժինն է փա՛ռք:
Համբուրւիլ կրնա՞ս՝ մի բորստի հետ.
Կամ դռանդ շան հետ կենակցիլ յաւէտ,
Կուգե՞ս ունենալ ժանտախտ ֆեղ ընկեր,
- Ահա՛ թէ ի՞նչ է ուամիկը սիրել....»

- «Ցածն ու բարձրը միայն հնչիւններ են սին,
Երբ երկու սրտեր կրնան միասին
Զգալ նոյն տրոփ, տեսնել նոյն տեսիլ
Եւ նոյն խոհերու մէջ մեկտեղ սուզիլ -

Անոնք ծնած են իրարու համար:
Հազար քագաւոր, ասպետ անհամար
Ես մատա՛ղ կընեմ մշակ Մէջնունիս:»

- «Նայէ՛ երկնամուխ է՛ն բանձրիկ սարին,
Որ ձիւն-քագ գլխին հազարտ է քազմած,
Մէկ էլ է՛ն ցածլիկ բլուրը դու տեսն,
Որ վարն, անոր դէմ ծունկի է եկած.
Կրնա՞յ սարն իջնել բլրին հաւասար,
Կամ բլուրն ելնել դառնալ բանձրիկ սար.
Տիրոջ սուրբ կամքն է որ էսպէս մնան -
Մէկն՝ զանան սոտր, մէկն՝ սիրող հսկան.
Մարդերն էլ Աստւած էդպէս ստեղծեց -
Հազարը՝ ուամիկ, մէկն՝ ազա՛տ ու մեծ....»

- «Սիրածն է ազնիւ քանց սալւր չինար
Զկա՛ մեծաւոր Մէջնունիս հաւասար:»

Եւ ծեր ցեղապետն սաստիկ բարկացած
Իր գերիներուն տւաւ իրաման,
Որ ձի հեծցնեն Լէյլան պինդ կապած
Ու նամբա հանեն դէպ Զիգիր, Բոհտան:



Քակած էին բոլոր վրաններն մի առ մի,
Թամբած էին հազար նժոյգ ամեհի.
Եւ իրը յուռուրք՝ հազար հազար գառներուն
Սիրուն նակատն ու ձիւնագեղմ կոնակներ
Սոսրը քսեր, շաղւած կաթով մայրերուն:

Եւ քաղցր Լէյլան՝ ձեռքերը կապ ու շղթա՛
Առատ մազի ծովերն ցանած հովերուն,
Հպարտօրէն հեծաւ իր սեւ երիվար՝
Արեւին պէս, որ կը բազմի ամպերուն.
Եւ գառներու մայիւնին հետ ծաղկատենց՝
Ճամբա ինկաւ դէպի Զիգիր ու Բոհտան:

Գիշերն ուշ էր, բայց դեռ Լէյլան կ'ուշանար.
Գիշերն ուշ էր. ու բարի քունը չէր գար
Մէջնունի աչքն էն համբայէն բաժնելու,
Ուրկէ տատրակն իր երազին թեւ առաւ:

Ու գրկին մէջ, որ մեկնումով Լէյլային
Արեւէն զուրկ մի վիհ պէս խաւա՛ր էր,
Հիմա Մէջնուն սազն էր գրկած տրտմալար՝
Եւ հովերուն Լէյլայի սէրն նա կ'երգէր:

Լոյսը բացւաւ վեր Սինջանի ջրերուն,
Նունուֆարի եւ նարգիզի բոյրերուն.
Լինն ու երկինքն որք մնացին առտղերէն
Ինչպէս մի սիրտ կ'ամայանա իր յոյսէն -
Բայց մոռացկոտ աղջիկը դեռ կ'ուշանար:

Գուցէ անոր հօր վրանը հեռո՞ւ էր.
Ու քաղելէն յոգնած Լէյլան կ'սպասէր
Լոյսի նման առաւօտին հետ գալու.
Ինքն էլ պայծառ մի առաւօտ անվախնա՞ն՝
Մէջնունի մուր կարօտ հոգուն ծագելու:



Խարտեաշ ամառ - ոսկի ժաղի ժամանակ.
Արեգակի բարկ ու մրկող շոգին տակ
Կը շնկային հազար մանգաղ, գերանդի.
Գիւղը՝ դատարկ, գեռուն էր կեանքը հանդի:

Լուսաստղին հետ, շոգ-կեսօրին, մինչ զիշեր
Գեղուկ նակուն քրտինք ժանց գետ կը հոսէր
Աղի օծած ոսկի հասկերն ու գետին,
Որ ծովի պէս յորդէր ամբարն մեծ պետին:

Բորիկ ոտքով՝ կրխելով փուշ ու տատասկ՝
Կին ու տղա կը ժողուէին բափած հասկ.
Ու կը կանգնէր արտերուն մէջ մէկ մէկ դէզ
Մեծ հրդէհի շէկ բոցերու սիւնի պէս:

Բարդով բարձած սայլիրն անցան նոռա՛լէն,
Եւ հետ անոնց ծեր գեղջուկներ տքալէն
Մէջնով որա տարան հանդէն մինչեւ կալ
Իրենց անխիղն մեծաւորին բռնակալ:

Ապա եկաւ կալի շրջան, լուսնի տակ.
Աշանն եղաւ յարդ ու ցորեն սպիտակ.
Պետք եկաւ սրսուռ էդ շեղը դիտեց
Ու զայրացաւ, յոգնած մշակը տփեց
Որ քէ ինչո՞ւ դէզը կրկին չէր եղած.
Ի՞նչ կար տարաւ. գեղջուկին բան չը մնաց:

Նա որ դատեց հերկէն մինչեւ կալատուն,
Ծանր սրտով, դատարկ ձեռքով դարձաւ տուն...

Էս ամենը հեռուէն դիտեց հէզ Մէջնուն,
Դիտե՞ց ու միտ քերաւ իր մայրն ու իր տուն.
Ու մտածեց որ արտն անքաղ կը մնար,
Եզներն անկեր, մայրն՝ անօքի ու տկա՛ր.
Բայց Լէյլայի սէրն էն իր տեղն էր զամած.
Շուտով կուգար, չէ՞ որ երդում էր ըրած...

Վերջին աշունն էլ հիւծեցաւ յամրաքար
Ինչպէս սիրով խոցւած մի կոյս ոգեվար.
Դաշտերուն վրա մշուշն ինկաւ անխափան
Սրտի վրա նստող ցաւի մը նման.
Եւ մի օր էլ անէծքի պէս տեղաց ձիւն,
Զմեռն իշաւ կատարները սարերուն.
Բայց Սինջանի լին ափին ամայի
Նա կ'սպասէր վերադարձող Լէյլայի:

▲

«Մոլար քամի՛, որ կը վազես սարէ սար,
Ըսէ՛, արդեօֆ անուշ Լէյլաս չի տեսա՞ր.
Սարալանջի նամբէն գնաց ծաղկաւէտ,
Կամաներու եւ ջրերու երգին հետ:

Ա՛յ, կոռունկներ, դո՞ւք որ երամ առ երամ
Մեր աշխարհին կերթաք Զիզիր ու Բոհուան,
Աստու՞ծ սիրէֆ, իմ եղնիկը եւ իմ սէր
Ո՞ր զրի ափ, ո՞ր շուտին տակ է՞ տեսեր:

Ա՛յ, չոր քերթեր, քա՞րմ-երք նա քովս կը փրթէր,
Հիմա անտէր՝ չորս հովերուն է՞ նետուեր.
Արդեօֆ մի գո՞յժ փափսաց ձեզի ջան Լէյլաս,
Որ դուք պարով կուզաք ցանել էն վրաս:

Դեղնած լեռնե՞ր, որ կը հեւաք քալաճիգ,
Հպարտ ժայռեր եւ սահանքնե՞ր երգեցիկ,
Երրոր Լէյլաս գա վերստին երգել ձե՛զ,
Ըսէ՛ֆ, անոր սիրոյն եղա ողջակէզ...»

▲

Ա՛յ, անիծով քող էն տարւա Դեկտեմբեր.
Ի՞նչ որ Մէջնուն տեսաւ, շա՞տ մարդ է տեսեր,
Բայց աշխարհի կայուն կարգն է համարած
Եւ անտարբեր իր սեւ օրերն է համբած:

Լնի ափին Մէջնուն շինած էր իր տուն
Հասս եղէզով եւ նիւղերով ուռերուն.
Եւ դուռ նստած Աստրծու օր ու գիշեր
Նա կը նայէր ուրկէ՛ պիտի գար իր սէր:

Զիւնը փակած էր նարն ու դուռն ու նամբան.
Գիւղն էր դարձեր ողջ մարդերու գերեզման,

Մի խումբ ասպետ՝ աչքերն արիւն, ձեռքը քուր,
Սարէն իշած, ափ կ'առնէին ամէն դուռ.

Կը խլէին իրենց սիրուն ի'նչ որ ուզէր,
Ի'նչ որ գեղջուկ մի տան լոկ նարն ու յոյսն էր —
Միակ ոչխարն, ալիւրն ու տաշու, գարծիքներ,
Ճեզ նորահարսն, քարմ ու համեստ աղջիկներ.
Ու կերքային - գիւղը սուզի մէջ քողած:

Քանի՛ գեղջուկ՝ էդ դառն կեանիէն ձանձրացած
Սինջանի ափ կը հասնէին գլխահակ
Իրենց ցաւին հետ քաղելու լնին տակ:

Մէջնուն տեսաւ կս բռնուրինն ու չարիք,
Անխիղն վայելքն, անվերջ վաստակն ու կարիք,
Եւ կեանքն այլեւս իրեն քաց անիմաստ.
Օր մ'էլ սիրու նամբին ինկաւ դիապաստ
Սէրն ու կարօտ դէմքին վրա քարացած —
Ձո՞ւրն էր քերեր իր կեանքն ու հովն էր տարած...

▲

Զմեռն անցաւ. կարապները թառիէն
Վերադարձն իրենց բոյնը փրփրաշէն
Զիւն լանջերով արծար-ջուրը հերկելու,
Ու երք տեսան սիրակարօտ պարմանին
Աղու՞ր — նոյնիսկ իր անլախնան քնի մէջ,
Վիզերը կախ, մրմունցներով ցաւագին
Գացին իրենց սէրը ծածկել շամբին մէջ:

Արագիլներն էլ գոյգերով ե՛տ դարձան,
Անմեղունակ իրենց սէրովն անխափան
Նո՞ր երազներ ու նո՞ր երգեր հիւսելու:

Նա՝ իր դէմքը դէպի նամբան հեռաւոր,
Սազը գրկած իր սրտին վրա սիրաջեր,
Մուր խոռոշէն, որ երեմն ա՛չքն էր աղւոր,
Կարծես անոր վերադարձին կ'սպասէր...

Ինչպէս երամն ճիւնասպիտակ հաւերռուն,
Ճազար քօչար վրանները կանգնեցան
Զուրերու ափ ու մէջ դալար ճորերուն :

Օջախներէն ելաւ ծուխը ծիրանի
Ինչպէս յուշը մի մեծ սիրու հեռաւո՞ր .
Ու հարաւի տաքուկ արեւ մը բարի
Դաշտին մէջ կեանք սփոեց, լնին վրա՝ երազ...

Հօտի նամքն - մէկ դարձն ոսկի, մին' զմրուխտ՝
Սրինգ քերնին հովին ածեց «քրին երգ» .
Եւ ջուրն անոր երգի մէջէն կարկաչեց
Զո՞վ ու գլուխն, ծաղիկներու երազէն .
Զրվէժն՝ մարմար ժայրերէն վար երկարեց
Իրեն հասակն գօտի կապած՝ ծիածա՞ն .
Երգէն գինով հօսր մինչեւ արքնցաւ
Եօթն անաղակ ջրերու ափ դիւրական :

Հովին էնտեղ պարզեց իր հաստ գարանակ,
Նետեց սրինգն, նստաւ լուռ ու գլխահակ .
Կեանքն էլ իրեն համար պատրանք էր եղած,
Եւ էն երբէք երազի ափ չէր հասած .

Ցիշեց իր «տուն»ն, կինն ու զաւակ՝ դոմիկ դուռ,
Եւ իր հոգուն պատեց կարօտ ու մրմուռ .
Հանց ջուրն՝ ակէն՝ էնապէս իր վիշտն նա պոռքկաց .

— «Տէրըդ մեռնի՛, փո՛ն աշխարհ...
Օձն ունի բոյն եւ սեւ ազուանն՝ իրեն քառ .
Իսկ ծեր հովին ո՛չ տուն ունի, ո՛չ սքար :

Գառն ու մաքին կը մէկտեղուին ամէն օր,
Ու կը դառնա հաւեն իրեն բոյն հեռաւոր .
Իսկ ծեր հովին՝ քարն իրեն բարձ, ժայռի տակ
Լոյս ու մքուն կ'երազէ կին ու զաւակ... .

Տէրըդ մեռնի՛, չար աշխարհ...»

Դղեակին մէջ ծերունի հօր Լէյլային,
Պարսիկ յարգի գորգերու վրա նկարէն,
Փունջ փունջ մեռան ծաղիկները աշնային
Անքախտ կոյսի տանջանքներու սնարէն :

Յովագենուն վրա անոր մահի՛նն էր .
Ու սիւներէն կախ եւ գլխին կուսական,—
Հմայեակներ ու անհամար յուռուքներ
Ուկի, զոհար տուփերու մէջ պատւական :

Թանգ վերուզով բանւած երկու տատրակներ
Բարձին երկու նորերն էին քառ նստած
Չար երազի եւ չար աչքի փրկելու
Անքախտ Լէյլան ու իր չքնա՞ղ շնորհնե՞ր...

Բարձին վրա մազերու ծո՞վն էր ծփուն
Թո՞ւխ, ինչպէս ծովն իր ցասման մէջ ահազին,
Դժգոյն էր դէմքն ինչպէս յոյսը նաւորդին
Եւ մարմրուն իրիկունին պէս տրտո՞ւմ...

Հայրը անոր գլխին հակած կը շոյէր
Վշտի բոցէն այրող նակատն էդ մարմար,
Այս պտտիկ մանկան նման կ'արտասւէր .

— «Անքա՞խտ աղջիկս, քո սիրտ պատոռդն է քո հայր .»

— «Երբ մեռնիմ հա՞յր, ինձ Սինջանի ափը տա՞ր,
Եւ ակին մօտ իմ գերեզման շինէ դո՞ւն .
Թող եղէզմներ վրաս նօնին անդադա՞ր .
Ուզեմ մոռնալ, բայց մահն իսկ ինձ չըտա՞ռուն...»

— «Հոգ մ'աներ Լէյլաս - վա՛ռ գարունն է մօտ -
Աստւած կամենա - կերպանք մեր գօղան,
Չեզ կը պսակեմ առօֆ ու փառօֆ,
Մէջնունդ էլ կանեմ յաջորդս ու փեսան .»

— «Մէջնունս քե՞զ յաշորդ - Մէջնունս ցեղապէ՞տ -
Ժակը մի խառներ լուսէ սիրուս հետ -
Աշխարհն ո՞ր պէտէն լաւ բան է տեսեր
- Լոկ լաց ու գրկանի, լոկ անվերջ հոգսէր...

Ի՞նչ արժեն հազար աւան ու քաղաք,
Ի՞նչ ընեմ էսքան քերդ ու ապարան.
Աստղերուն թիւ կա՛ - ու հօտիդ չկա,
Աւազին՝ համրանի՛ ու գանձիդ - չկա.

Բայց ի՞նչ շահ տւին անոնի, ի՞նչ բարի.
Միայն լեռ տանջանի, միայն ծո՛վ կարի.
Խեղն ժողովրդիդ սեւ բաժին մնաց:

Անոնի դատեցին, մնացին անհա՛ց,
Անո՞նի շինեցին, մնացին անտուն,
Եւ մեռան անոնի որ ապրի՝ քո տուն:

Մեր հացը մարդու մսի համն ունի,
Մեր ջուրն ու գինին՝ անմեղ արիւնի -
Ասես էս բոլորը չէր բաւական,
Սիրուն էլ պատուցի՛ր քո հէզ աղջկան :»

Եւ հայրը կանչեց ցաւէն մոլեգմած -

- «Զը լուսնար էն սեւ օրն որ ես ծնա -
Չը քւէր էն վայրկեան լոյս, աշխարհ տեսա.
Մեծցա կամակոր, մեծցա ես հզօ՛ր
Համբաւը հնչեց աշխարհքը բոլոր -
Մինչեւ որ կամքիս, հզօր ոտքիս տակ -
Եօրը ցեղ ըրի հլու հպատակ.
Ի՞նչ որ ուզեցի - քերին ուժն ու գինի -
Ի՞նչ որ ցանկացի, ինձ տւաւ օրէնի :

Էսքան ուժն ու գանձ ինձ ի՞նչ են արժեր՝
Հոգու խոր կսկիծ - տանջանիքի գիշե՛ր.
Մէկ հատիկ աղջիկ բիրտ ձեռքովս խոցւած.
Տէ՛ր, էս ինչ վայրագ գազա՛ն եմ եղած...

Լէյլա՛, քե՞զ մատաղ, ներէ՛ քո ծեր հօր,

Ես դո՛ւրս եմ հաներ հազար ձիաւոր,
Որ ո՞ւր էլ լինի գտնեն քո Մէջնուն,
Գտնեն ու փառքով քերեն քո հօր տո՛ւն...»

- «Երազիս տեսա իմ Մէջնուն, իմ սէ՛ր.
Մարմինն՝ ցրտատար, աչքը կրա՛կ էր.
Ըստ . 'անաստա՛ծ, ինձ սպաննեցի՛ր.
Փայտէ դանակով կաշիս քերքեցի՛ր.
Գեղջո՞ւկ է ըսիր, հետև անեմ կատակ,
Ի՞նչ փոյք որ մի տո՛ւն կըլլար փլատակ.
Քանդո՞ւի՛ քող Սինջան, անապա՛տ դառնա՛...
Մէկ էլ գիրկս ինկած լացաւ անխնա :

Մեռելի լացը, հա՛յր, ի՞նչ դաժան է.
Կեանիս առանց անոր բո՛ց ու գեհեա՛ն է...»



Եօրն աշխարհէ, եօրը նարտար բժիշկներ
Լէյլայի ցա՛ւն եկած էին բուժելու.
Մէկը փրանկ սպեղանին էր քերեր,
Մէկն՝ իր դեղը-աւանդն անքիւ դարերու :

Ու երրորդն էլ իւղն էր քերած հոտաւէս՝
Մշկեղնիկի պորտէն քամւած ու վարդէն.
Չորրորդն ունէր առիւծի կաք իրեն հետ,
Մէկն էլ մի նա՛ր Հինդուստանի կախարդէն :

Ու վեցերորդն հզօր փոշին էր քերեր՝
Լուսնի լոյսով բիւրակնի մէջ պատրաստուած.
Ու եօրներորդն՝ շարքար մը քազը ինչպէս սէ՛ր
Եօրը կոյսի կոյս համբոյրով կնիքրած...

Ոչի՞նչ եղաւ, սակայն, անոր վէրքին նա՛ր.
Ո՛չ մէկ բժիշկ գիտցաւ պատման էդ ցաւին.
-«Զարն է զարկած սիրտն աղջկանդ, անբախտ հա՛յր»
Ըսին, եկած նամբով նորէն ետ գացին :

▲

Մա՛րտն էր արդէն . ու մաքիներն մարգին վրա
կը ծնէին իրենց գառներն երկուրեալ .
կը տարածւէր կոնէ ի կոն հեռակա
Մկնցն առոյգ՝ ուղիկներուն սպիտակ :

Եւ կոյսերը շօրօրակն ու գւարք
Վրանէ վրան՝ պսակազարդ դոյլերով
կը տանէին դալը՝ դեղին որպէս սար՝
Խնկով օծուն ու մակարդւած բոյրերով :

Լէյլան, սակայն, իր հօտին տես չի գնաց .
Եօթն ուղերէն նա չի կախեց բոժոժներ .
Նոր կաքն՝ արծար կը ոցներու մէջ մնաց .
Եւ իր բերնին չի դպան նոր դալն ու սեր :

Կը մտածէր որ Սինջանի լճին քով
Իր Մէջնունի կանաչ արեւն էր մարեր .
Իրեն համար ի՞նչ արժէր օրն ու արեւ .
Կեանքն՝ անիմաստ, օրն էլ ցաւ ու խաւա՛ր էր ...

Հ

Գարունն եկաւ, ճամբար ընկաւ կարաւան
Դէպի հիւսիս, դէպ Զերմաձոր ու Սինջան .
Կը տարածւէր հեռո՛ւն, սարէ մինչեւ սա՛ր
Զւարք զնզոցն բոժոժներուն զըրընգուն,
Եւ տողանցքը կտրիններուն զինավառ .
Յետո պարք լիենք ու կայտառ այծերուն՝
Հովին ձգւած կոյսերու սեւ մազին պէս,
Ապա շարքը մաքիններուն թխագեղ՝
Բէրւորներու աչքին նման երազուն,
Եւ գառներու հանդարտ շարանը ձիւնեղ՝
Մարգարտաշար մի մանեակի պէս ծիծդուն :

Անցան խումբերն վարդ կոյսերուն գեղեցիկ,
Գարնան նման վառ գոյններով զարդարուն,
Գլուխ դրած մետախս գդակ գումագեղ –
Զարդ-ոսկիով, ակունքներով բեռնաւոր .

Եւ անոնց հետ անցաւ Լէյլան սեւաբախտ՝
Մի տօնօրի դամբան տարւող նաշին պէս ...

– «Լէյլա՛, մեր մէջ փայլող լուսնակն ես պայծառ
Ու մենք՝ շուրջըդ վառող աստղերն ենք պլանուն .
Դո՛ւ վառ գարնան ծիլն ու ծաղիկն ես դալար
Ու մենք՝ թափող տերեւները ազազուն ...»

– «Քոյրե՛ր, մարող ասուան եմ ես տարագիր
Եւ դուք շուրջըս թռչող կեանքուտ փոսուռա .
Ես իմ սիրու սեւ դագաղն եմ սգակիր
Եւ դո՞ւք երկնուց կախւող աստղերն արծարեա ...»

Կոռւնկներու մի խումբ անցաւ մոլորուն,
Հեռո՛ւ, անհաս՝ մեր յոյսերուն, սիրուն պէս .
Ու կ'երգէին կարօտն վայրի վարդերուն,
Գիներո՛ւկին, որ կը ծաղկի ծովի պէս .

Լէյլան կանչեց ձայնով մը բաղցր ու տրտում.
-«Երնէկ ձեզի, դր' ու ցա՛ւ չունիք, կռունկներ,
Սրտի մրմուռ եւ սիրու վէրք չէ՛ք գիտեր.
Զկա ձեր մէջ դաս ու կապանք ու պատւար.
Մէ՛կ է ձեր կռւտն ու սիրու մէջ է՛ք հաւսար:

Շատ ջրի համ, շա՛տ ծաղկի հոն է՛ք առեր.
Անցած է՛ք շա՛տ կախարդական երկիրներ.
Ձեր կռուցին մատաղ, բսէ՛ք, կռունկնե՛ր,
իմ հրեղէն Մէջնուն արդեօֆ կապրի՞ դեռ...»

Բայց կռունկներն շտապ անցան կըւալէն,
Ու հեգ Լէյլան անպատասխան ու լալէն
Հնձւող դաշտի նամրէն կ'երբար դէպ Մինջան
Հոն գտնելու իր սէրն ու կամ իր վախճան...

▲

Ու կը զնգար մանգան ամէն մշակի
Որպէս փայլակ, արտն էր կարծես բռնկեր.
Ու բոցի պէս կը ծփային բիւր հասկեր
Կը դառնային խուրձերուն մէջ գուտ ոսկի'...

Զուրէն՝ շօրօր դարձան գեղջուկ աղջիկնե՛ր.
Կռւժն էր շիկնած անոնց վզին դէմ մարմար.
Ու նակատին՝ յուլուն ու զարդ շար է շար.
Հարսերն եկան տիկերը լիք կաթ ու սեր:

Եւ մշակներ կռնակ տւած խուրձերուն
Շուրջ բոլորան պարզ, անխարդախ սեղանին.
«Էս քրտինք չէ՛ որ կը բափենի մեր արիւն...»
Բոին, իրենց աղքատ տուներ միտ բերին:

Մինչ զնգալէն մեծ բարվանը կը հեւար
Հնձւած դաշտի մէջէն իր տաղն անդադրում.
Եւ անոր հետ կ'երբար Լէյլան մոլորուն
Հնձւած արտի պէս իր յոյսէն մերկացած...

Թ

Մէջնուն չըկա՛ր. լոկ իր տանջւած ոսկորներ
Ցրւած էին տակ խոտերուն, եղէգին.
Ամէնի տակ աղքանց-արաւն էր փր-քեր
Ապրիմ-չ'ապրիմ եւ հրանունկ մը ոսկի'...

Մէջնուն չըկա՛ր. բայց դեռ դալար եղէգներ
Իրար գրկած կը սրսփային սիրագին.
Եւ հովտուիին իր գառներուն կը սրնգէր
Իր սէրն անմեղ ու վէպն արծաք լնակին:

Վարդավառի իրիկո՞ւն էր հրանուշ
Ու դեռ Լէյլան ըստերի պէս կը բալէր
Լնի ափէն. Եւ աչքերէն իր անուշ՝
Լացն աստղերու պէս շամբին ծոց կը մարւէր:

Տարի մը առաջ էնտեղ աննառ դրախտ էր,
Գիշերն՝ երազ, օրն էլ խնդում ու բախտ էր.
Երբ իր կողքին սէգ կը կանգնէր իր Մէջնուն,
Ինչպէս սօսին մէջ անտառի ծառերուն:

- «Արծաք լնա՛կ, որ կը նազիս վէտ ի վէտ՝
Համբոյրին տակ բնենուշ հովին ամբարէ.
Ըսէ՛, մի՞քէ ափերուդ վրա ծաղկաւէտ՝
Սիրած Մէջնունս երբէ՛ք պիտի չի բալէ...»

Երբոր գիւղի սիրող հովիւն ու հօտաղ
Իրիկունվ սրնգել զան զըրիդ բով
Մի գուսանի եօթ հեքեարները չքնազ,
Նա չը պիտի՞ լսէ անոնց հրմանքով...

Այլեւս պիտի չը տեսնէ՛ նա վառ գարուն,
Ո՛չ քաղն ոսկի, եւ կուքն յորդուն մաղերով.
Ո՛չ գաղքն ըշտապ աշնան նախշուն հաւքերուն,
Եւ ո՛չ էլ դարձն ուրախ իրենց լիւած բո՞յն...»

Ճ

Վերջին մի տեսչ վառեց սիրտը Լէյլայի.
Մի անգամ էլ իր մարմնաւոր աչքերով
իր պերճ Մէջնուն տեսնելու տե՛նչն ահազին.
Նորէ՛ն ամոր ժպիտին մէջ քաղւելու,
ինչպէս ձուկը լնի բիւրեղ զրերուն,
Հա՛ւքն էլ կապոյտ երկնեֆին մէջ կը սուզի.
Ու անկէ՛ վերջ էլ ինիք բաժինն է մահին,
Ինչպէս քափող տերեւն աւա՛րն է հովին:

Կմախքին դէմ, որ իր առջեւն էր դիզած,
Ծունկի եկած, աչքերն լացի գետ յորդան,
Նա՛ ետ կանչեց իր սեւարախտ սիրական...

— Զա՛յն տուր իմ Մէջնուն, ձա՛յն տուր, սիրակա՛ն,
Հոգին հանեցիր սիրածդ աղջկան.
Հէ՛յ, ալմաստ սարե՛ր, հէ՛յ դաշտ ու ձորեր
Սիրաւոր սիրտը ես ձե՛զ իմ բերեր:

Թափեցէֆ ձեր ցօղն, ձեր բոյրն ու արեւ
Անբախտ սիրածիս ուսկերուն վերեւ.
Թող կեանքին դառնա՛ ինչպէս խոտ ու ծառ
Գարնան արեւի քովքին տակ պայծառ:»

Եւ մարգարտեա իր արցունքին ընդմէջէն
Լէյլան տեսաւ տեսին էս քաղցր, փաղաքուշ.

Կմախքին վրա մի միս եկաւ այնքա՞ն քարմ,
Որքան լուսուն դեռ նոր բացւած քափուր վարդ.
Լանջն ուռեցաւ նորոգ շունչէ մը առոյգ
Գարնան կախարդ սիւերուն պէս կենարար.
Ու դէմքին վրա մի վառ ժպիտ ծոտկեցաւ
Էնքան պայծառ, որ առաւօտն իսկ չունի՛:

Եւ կը խաղար շամբին մէջ հովն երջանիկ
Թևերն լոյսով, բոյրով, սիրով բեռնաւոր.
Արծաք ալիք մը՝ քաւալած լնափին՝
Կը պսպդար ոսկուն վրա աւազին.
Եւ մնջիւնը մի զոյգ սիրող տատրակի
Օրինուքեան պէս դաշտին վրա կը փուէր:
Մէջնուն իր հետ խոտ ու ծաղլիկ կոխելով
Աղբիւրի պէս երգ ու ցոլքով կը քալէր:

Եւ մեծ տանջանքն ու հսկումի սեւ տարին,
Եւ իրենց չուն դէպի Բառին, ե՛ւ ձմեռ,
Ու վառ կարօտն, որ իր յոյսերն էր խանձեր,
Անգուք երազ կը քւէին Լէյլային...

▲
Լէյլան կըսէր Մէջնունին.
— Ձեր տուն տա՛ր ինձ, Մէջնուն, բռնած էս ձեռքէս,
Հօտա՛ղ լինիմ, կալու՛ր լինիմ, ի՛նչ կուզես.
Տա՛ր ինձ, բռնած էս ձեռքէս...»

Մէջնուն կըսէր Լէյլային.
— «Տընէս մի քա՛ր չէ մնացած քարի վրա.
Լոկ ծեր ազուան չոր քարտիկն կը կուա՛
Եղերօրէն իր տաղտկալի շարական.
Մայրը մեռաւ՝ խոցւած լուրէ մը գուժկան.
Հանդս ու այգիս — պարման ձեռքովս մշակւած
Խոպա՛ն են այժմ, սէզ ու փշով ծածկւած.
Քեզ ո՞ւր տանիմ, քաղցր Լէյլա՛ս...»

Լէյլան կըսէր Մէջնունին.
— «Մէջնուն, մատաղ, արի երքանիք իմ հօր տուն,
Զով ջրի ափ, սարի լանջին իմ հօր տուն,
Ո՞ւր մշտական ծաղկատօն է ու գարուն.
Մէջնուն, մատա՛ղ, արի երքանիք իմ հօր տուն...»

— «Քո հօր տան մէջ մշակ Մէջնուն տե՛ղ չունի .
Եւ էն արդէն լոկ մի յուշ է անցեալի .
Մարած է հուսկ կայծը անոր կրակին ,
Եւ պաղ մոխիրն ցրւած անքիւ հովերու :
Վայրագ մի խումբ ազնւական գողերու
Իշաւ սարէն ինչպէս անզուսալ պատուհաս .
Հայրդ զգալով որ եկած է իր օրհաս
Մի մեծ ժայռէ վար նա եղաւ գահավէժ .
Հոտերն տարան դէպ Համադան ու Դաւրէժ
Մորքելէ վերջ ձեր կուողները բոլոր .
Եւ ժողովորդն եղաւ նորէն հպատակ
Ազնւական էդ գողերու ոտքին տակ :

Աւա՛ղ , մարած է աստղն քո տան ու քո հօր .
Քեզ ո՞ւր տանիմ , եկա Լէյլաս ...»

— «Ճար ինձ , Մէջնուն , ո՞ւր կուզես ,
Սարերէ դէն , ծովերէ դէն — անապատ ,
Արեւադարձն , դէպի հիւսիս ձիւնապատ ,
Հոն ուր սէրը չունի շղթա ու պատար ,
Ուր մարդը տէրն է վաստակին իր արդար .
Գերի՛դ եմ ես , քո սիրուեին , քո ըստեր
Ահա՝ կուզամ , բա՛ց ինձ հզօր քո քեւեր ...»



Յաջորդ օրը երբ իր փոքրիկ հօտին ենտ
Ծերուկ հովին հասաւ Սինջան ծաղկաւէտ ,
Լնակին մէջ , եղէցներու շուքին տակ
Գտաւ հանեց եկա Լէյլայի սառ դիակ :

Աչքերը բաց նա դեռ Մէջնուն կ'երազէր .
Նունուֆարով գուգւած էին իր մազեր
Կազմելով գողտը պահն անքիծ հարսնութեան :

Կրծքին սեղմած էր գանկը չոր , սիրական
Իր փեսային , իր Մէջնունին վաղամեռ ,
Որ Լէյլային դարձած կարծես կը ժպտէր ...

ԳՈՐԾԱԾԻԱՆ ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՌԵՐ

ԳՈՐԾԱԾԻԱԾ ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՌԵՐ

Աղքաբանց արտան - Կարմիր, արիւնի դոյնով լեռնային ծա-
ղիկ
Անանակ - Ծխածան
Աստար - Աշխարհ, այս կողմը եղածը
Բէր - Լեռան մէջ հօտը կթելու տեղ
Բէրտը - Բէրը գնացող եւ կաթ կթելով տուն բերող կի-
ները - առհասարակ աղջիկներն ու հարսները
Բոտ - Մեծ ծառերու բունին մէջ փառութենէ առաջացած
խոռոչը
Գարանակ - Թաղիքէ հովւական վերարկու
Գազպին - Անտառի ծառերուն վրա իջնող քաղցր, շատ
յարգի հիւթը
Գայլ Գետ - Աւանդական գետ, որ Մհերի ստորերկրեա
բանտէն կանցնի
Գզրար - Նաեւ կատան, որ միալար դործիքով մը բուրդն ու
բամբակը կը գցէ աւելի կակուղ եւ մանելի դարձնե-
լու համար
Դաղ - Խարան, խարանել
Դաւրէժի Դուռը - Վան բերդաքաղաքի արեւելեան դուռը
Դէմ Տալ - Հակառակիլ
Խսպահան Ուռ - Ուռենու մէկ տեսակը բարակ, չիտակ,
արագ երկարող
Լան - Տղա, մանչ, տղամարդ
Լօշ - Նաեւ Լալաշ, շատ բարակ բացւած հաց
Ծուռ - Քուռ - Խենթուկ, անուղղա
Կաշտ - Նաեւ Կաճետ, գիւղ մը Շատախի մէջ, նշանաւոր
իր բնական անմրցելի գեղեցկութեամբ եւ բնակիչնե-
րու խենթութեան հաւասարող յանդկնութեամբ
Կորք - Դժւար հերկող գետին
Կոռ - Կամարաձեւ գլխով գաւաղան
Հալաւ - Հազուստ
Ճնան - Խառնակւած, անփոյթ
Ճղօր - Կախօրրան, ճղօրրան
Ճուք - Խաղողի ողկոյզ, նաեւ ժանեակ
Ճռվկել - ճղախառն քաշել, փրցնել, պոկել
Մարէ - Մա'յր, փաղաքական

Մհեր - Հայ ժողովրդի աւանդական հերոս, կեղեքուղ գիւղացիութեան պաշտպանն ու ախոյեանը: Գիւղացիները կեղեքող մէծաւորներու եւ իշխաններու դէմ մղած իր աննախընթացօրէն արիւնալի մէկ կըռ-ւի ընթացքին, Վանի հիւսիսային կողմ, Ակուիու ժայռերու ստորոտը իր առջեւ բաց գտնուող կախար-դական դռնէն ներս կը մտնէ անոր ձին եւ դուռը վը-րան կը փակւի: Այս կախարդական բանտին մէջ Մհեր կ'սպասէ ըմբոստացող մշակներու եւ աշխա-տառորութեան կանչին: Այդ օրը «Յասման Օր» կը կոչեն. Մհերը պիտի պատուհասէ իր ժողովրդի կե-ղեքիները եւ ազատութիւն պիտի բերէ գիւղացիու-թեան

Ծնգ - Տաք, տապ

Ծուռ Տալ - Թափել, ամանի բերանը վար դարձնել
Ոստին - Անջրդի, անջուր հող

Աւսի - Զեան հիւսը

Զուր - Երկար ու մետաքսանման մաղերով այծ. չուռի
մազը գաֆ կը կոչւի

Պրիշակ - Աւել, քանդած

Սալիկ - Երկար ու չնորհալի բարձրացող անպտուղ ծառեր

Սինամ - Փարթամ, գեղ
այն գործածական

Աբար - Ապաստանարան

Սրբութ - Քողջոկ, մաքուր, հատիկի համար գործածող
Սօս - Կառավեց ուժեցի համար գործածող

Յարսիր դոյնի վի
նեն

Տորան - Բուսական արմատ մը, որմէ կարմիր ներկ կը

ՀԱՅՈՒԹԻՒՆ

ՓԵԼՔ - Փայլ, պայծառութիւն
Փոխխնդի - Բոված ցորենի ալիւրով և կարագ իւղով
պատրաստած համադամ, յատկապէս ճամբորդու-
թէւն

թեան յարմար
Քափուր - Մոյզ կարմիր գոյնով բազմաթերթեան անու-
շահութ վարդ

բէլֆ - Քայլ, քալւածք

Բոա - Քարակոյտ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ

Աղերս	68
Ամենուրեց	69
Անքաղները	28
Անվերադարձ	24
Անտէք Գիշեր	56
Անտունի	14
Արտ Կը Զրեմ	59
Աւերակներէն	18
Բայց Դու Չես Գար	11
Գերեվարումը	40
Դու Հիւանդ Էլիր	21
Եա'ր, Մօռովս Անցար	54
Երբ Վերադառնաս	15
Զինուրերը	31
Ընդգումը	38
Լէյլա Եւ Մէջնուն	127
Խաչի Ճամբուն Վրա	35
Խորհրդային Հայաստան	75
Ծամբելը	121
Կանչը	64
Կարաւանի Ետեւէն	91
Կարմիր Բանակին	77
Կարօտներս	9
Կը Յիշե՞ս	12
Հայ Կարաւանին Հետ	27
Հանգստի Գիշերը	37
Հարցաֆնումէն Վերջ	32
Հէյրան ու Զէյրան	83

Հիմ Կովկաս	71
Հոգիս Յուլարկաւոր Մոմն է	16
Հրաժեշտը	26
Մայիս Մէկ	63
Մեր Անմուրադ Քերքողներուն	78
Մէկ Վայրկեան	13
Միասնիկեան	74
Մհեր	65
Մշակի Սէրը	49
Մօր Վիշտը	17
Յուսալֆումը	44
Նազանի	51
Նոր Կովկաս	72
Նոր Հորովէլ	67
Նոր Ռուսաստան	73
Ո'վ Իմ Տուն	33
Սիրերգ	50
Վերջին Դեկտեմբեր	20
Վիրաւորը	22
Տրտմութիւն	23
Փարքամ Աղջիկ	57
Քարվան Եկաւ	53

ՀՀ Ազգային գրադարան



NL0363223

9/5

55196

ԳՐԱԴԱՐԱՆԸ

ՀՐԱՄԱՊՐԱԿԻՑ

CENTRAL PRINTING COMPANY
401 N. BROAD STREET
PHILADELPHIA > > PENNA.